Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Дмитриевский
Григорий Ив/ч
дипломатик

1904 г.

323·1
Д-29

15 JAN 2010
323.1
Վ-29
26 SEP 2006

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Հրատարակութիւն

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

5975

ԺԸՆԵՎ
1904

16724

8 AUG 2013

3226-2002

ԱՌԱՋԱԲԱՆ

Շատ կան խնդիրներ, որոնք կարօտ են լայն թէօ-ռիական ըմբռնումների։ Բայց ո՞ւր են մեր մէջ թէօ-ռետիկոս-հրապարակախօսներ...

Հայկական արիւնոտ իրականութիւնը ինքնին պա-տասխան է այդ տխուր հարցման։ Կեանքի յորձանքը կլանում է լաւագոյն երիտասարդ ուժերը և ժամանակ չէ տալիս փիլիսոփայելու, ընդհանրացնելու։

Ներկայ գրքոյկը հրատարակելով, մենք հնազանդւում ենք մի ներքին պահանջի, որ միանգամայն թւում է ընդհանուր, ժողովրդական։

Որոշել հայրենիքի դիրքը երկրագնդի վրայ, նրա ըմբռնումը լուսաւոր աշխարհում և մարդ-անհատների քաղաքացիական պարտաւորութիւնները նրա վերաբեր-մամբ, — ահա ինքնին հրապուրիչ մի նիւթ։ Բայց նա հրապուրիչ է մասնաւորապէս հայ գրողի համար, քանի որ ունի հայկական կեանքում կենդանի այժմէութիւն։

Հայի հայրենիքը յօշոտւում է դրսից, յօշոտւում է ներսից։

Դրսից՝ ասիական բռնակալներն են, որ ձեռք ձեռքի տուած, ձգտում են ջնջել մեզ, մէկ տեղ մորթելով, միւս տեղ բարոյապէս խեղճացնելով, ազգային կեր-պարանքից զրկելով։

Ներսից՝ անտարբերութեան պատուհասն է,— մեղմ որակումով —որ արտայայտւում է ազգային բոլոր գործոնների նկատմամբ։

Չին, բայց միշտ թարմ վէրք··· Որքա՞ն տուժել ենք նրանից··· Որքա՞ն նիզակներ են փշրել նրա համար դեռ 60-ական թուականներին, հայոց վերածնութեան ռահվիրաները։

„Աստուածընտիր“ ազգ չկայ, ի հարկէ։ Իւրաքանչիւր մի ցեղ ունի իր յոռի, բացասական գծերը, որ դարերը ամուր դրոշմել են նրա ճակատին։ Բայց բոլոր ազգերն էլ—գէթ ժամանակակից քաղաքակրթութեան մէջ—ունեն մի բարձր առաքինութիւն, այն՝ որ բոլորն էլ ձգտում են պահպանել իրենց ազգայնական ուրոյն կերպարանքը, որ միանգամայն ներդաշնակւում է առաջադիմութեան պահանջների հետ։

Մենք էս վաղուց քաղաքակրթութեան աւազանն ենք մտել։ Մենք պարծենում ենք մեր „վերածնութեամբ“, մեր կուլտուրական ունակութիւններով։ Մենք ճանաչել ենք լուսաւոր աշխարհից, որպէս մի ինքնատիպ ու առաջադէմ ազգ, որ ունի կատարելու մի փայլուն միսսիա խաւար Արևելքում։ Մենք սիրով ընդունում ենք մեր վրայ այդ միսսիան։ Բայց ահա հակասութիւն. մենք միաժամանակ ցոյց ենք տալիս մի խելագար անհոգութիւն՝ դէպի այն բոլոր գործօնները,—լեզու, մամուլ, գրականութիւն և այլն—որոնք կոչուած են առաջնորդելու մեզ իբրև ուրոյն, գիտակից ազգի, դէպի համամարդկային քաղաքակրթութեան իդէալներ։

Ռուսացման վտանգը զուր խօսք չէ այլևս, ոչ էլ յոռետես մի բանդագուշանք։ Եւ ռուսացումը բռնի չէ միայն, այլև կամաւոր։

Տարիներից ի վեր մեր վրայ տեղացող բիրտ հարուածներին մենք պատասխանեցինք միշտ ծառայական համակերպումով և խրախուսուած դրանից՝ ռէակցիան առաջ գնաց յարաճուն կատաղութեամբ, մինչև որ հասցրեց ներկայ տագնապին...

„Մի ամբողջ դասակարգ հայութեան մէջ՝ բուրժուա-

առևտրական դասակարգը, այնքան ռուսամոլ է, որ վըտարել է իր ընտանիքներից մայրենի լեզուն, փոխարինելով այն՝ ռուսերէնով“.—այսպէս էին խօսում վերջին ժամանակ—մելամաղձոտ ու հեգնական շեշտով—արտասահմանեան ռուս յեղափոխական հրատարակութիւնները, արձանագրելով ցարիզմի անմիտ ու ապերախտ արարքները Կովկասեան Հայաստանում...

Այդ յայտնութիւնը, որքան վշտաւէտ, նոյնքան և ստոյգ է, տարաբախտաբար.—նա բնորոշում է ցեղական մի արատ։

Չընայած բոլոր բացառիկ օրէնքներին, որոնց ենթակայ ենք, չընայած բոլոր դրակօնական ճնշումներին՝ մենք ցոյց ենք տալիս ձուլման հակումներ...

Ուլտրա-կոսմոպոլիտական մի հակակրելի ձգտում է բուն դրել հայկական գիտակցութեան մէջ, որ տանում է դէպի այլասերում, ապազգայնացում (Dénationalisation)։ Նա ճարակում է „բարձր“ խաւերը և կամաց կամաց իջնում է դէպի ցած...

Հայ գաղափարական երիտասարդութիւնը կոչուած է մաքառել այդ անպատիւ երևոյթի դէմ, բայց նրա մէջ էլ տիրում է մոքերի խառնաշփոթութիւն։

Նրա մի մասը, թիւր ըմբռնելով սոցիալիզմի վարդապետութիւնը, նրա անունով ժխտական դիրք է բռնում հայի ազգային ստացուածքների նկատմամբ։ Լեզու, դըպրութիւն, հայրենիքի գաղափար, ազգայնական ինքնուրոյնութիւն և այլն և այլն, նրա աչքում ամենաշատը՝ աւելորդ նախապաշարումներ են, որոնց վիճակուած է շուտով չքանալ... Նրա համար գոյութիւն չունի հայ ազգային-քաղաքական դատ և նա բացասական դիրք է բռնում նաև դէպի ռուսահայոց մասնակցութիւնը թիւրքահայ շարժման։ „Կովկասահայերը չեն կարող մասնակցել մի դատի, ուր իրանք շահ չունեն“...Ամեն

բան վերածւում է մատերիալիստական շահի և դասակարգային կռիւների. . .

Մենք յոյս ենք տածում, որ ներկայ գրւածքով պիտի կարողանանք գէթ մասամբ պարզել թիւրիմացութիւնները և նպաստել՝ ուղղելու մտքերը դէպի մի բանաւոր աշխարհահայեացք, հիմնւած գիտական ճշմարտութեան վրայ, որը մեր միակ ղեկավարն է։

Մ. Վ.

1 մայիս, 1901

I

ԱԶԳԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Սօցիոլոգիական մի կնճիռ. — Ե՞րբ է կազմակերպւել ազգային ոգին. — Նախապատմական շրջան. — Հաւաքական գիտակցութեան սկզբնաւորումը. — Ընկերակցութիւն. — Կռիւը, իբրեւ պատճառ մարդկանց համախմբման։

Հայրենիքի գաղափարը. . .

Մի հին, շատ հին բնազդ, որ նոյնանում է ազգայնութեան գաղափարի հետ և որ եղել է ամենահզօր խթաններից մինը քաղաքակրթութեան էւոլիւցիայի։

Մի կուռք, որի առջև անյիշատակ ժամանակներից ի վեր սերունդները գլուխ են խոնարհեցրել ճշմարիտ կրօնական երկիւղածութեամբ։ Խունկը ծխել է դարերի ընթացքում նրա պատւանդանի վրայ և միլիոնաւորների աղիողորմ հեծկլտոցները երկինք են սլացել մարդկային ողջակէզների արեան գոլորշիների հետ. . .

Մի դիւթական բան կայ այդ գաղափարի մէջ, որ միշտ հմայել ու ցնցել է ժողովուրդներին, հասցրել է նրանց խանդավառութեան գագաթնակէտին և պատճառել է ահագնագոյն սասանումներ . . . Պատմական ծանր փորձութիւնների ժամին, երբ հայրենական օճախի վրայ յանկարծ փչում է կործանարար հողմը, երբ բրոնաւորի դժնդակ ուրւականը նկարւում է հորիզոնի վրայ և հնչեցնում ռազմի շեփորը, — նա է, այդ կախարդական գաղափարի ուժը, որ մի ակնթարթում ի մի է գումարում մարդկանց անհամար լէգիոններ,

մղում է նրանց դէպի փոթորկի յորձանուտ հոսանքը, դէպի յաղթութիւն կամ դէպի կորուստ...

Երբ — սև օրերին — դահճի խարազանը սկսում է աւերումի իր դժոխային գործը, երբ հարազատների արիւնը հոսում է հեղեղներով և միլիոնաւոր ժողովուրդը յոշոտուած, արիւնաթաթախ՝ գալարւում է բռնաւորի ոտքերի տակ, — մենք դարձեալ տեսնում ենք այդ ուժը, մենք տեսնում ենք դարձեալ հայրենիքի ազատութեան ոգին, որ դիակոյտերի ու փլատակների տակից վեր է սլանում հզօր, անպարտելի, հեգնում է թշնամու ժոլեգնութիւնը, հեգնում է ճակատագրի բոլոր խաղերը և սիրտ է տալիս յուսահատածներին:

Մի հրաշալի ուժ... Դա՛ որ սովորական, նորմալ ժամանակ թւում է շատերին մի տարտամ յիշատակ, մի տժգոյն աբստրակցիա, — նա տագնապների, գոռ փոթորիկների ժամին հանդէս է գալիս, որպէս մի վսեմ իրականութիւն, մի անսպառ աղբիւր փայլուն, առնական սխրագործութիւնների, դիւցազնական անձնուիրութեան:

Դա՛ որ սովորական, նորմալ ժամանակ պարտաճանաչ քաղաքացուն անգամ չէ ալեկոծում, նա անօրինակ դրժբախտութեան օրերում բոցավառում է նոյնիսկ հասարակութեան տականքները, նա հերոսացնում է նոյնիսկ հեղգերին, թուլամորթներին...

Ո՞րտեղից է գալիս այդ զարմանալի գաղափարը... Երբ է արդեօք դրւել ազգայնութեան սաղմը երկրագնդի վրայ, երբ է կազմակերպւել, կուռել ու կոփւել այն հաւաքական գիտակցութիւնը, որ մենք անւանում ենք ազգային ոգի:

Դժւարին հարցեր: Եւ մենք նրանց վրայ շատ չենք ծանրանայ: „Ծագումների“ հարցը ամենակնճռոտն է սոցիոլոգիայի մէջ, ինչպէս նա ամենակնճռոտն է և կենսաբանութեան ու տիեզերագիտութեան մէջ: Ազգայնու-

թիւնը, համարեա թէ կարելի է ասել, նոյնքան հին է, որքան մարդկանց ընկերակցութիւնը: Նրա սկիզբը փնտրելու համար՝ պէտք է անցնենք պատմութեան շէմքից, պէտք է իջնենք այն մութ, արհաւրալից նախապատմական շրջանը, երբ դարվինիստների ասելով՝ կռիւ էր բոլորի ընդդէմ բոլորի... Գոյութեան բնազդը ամենաուժեղն էր, և մարդը ձգտում էր ամենից առաջ ապահովել իրեն՝ թէ մարդ-գայլի ախորժակներից և թէ բնութեան աՀարկու տարերքներից, որոնք միշտ պատրաստ էին պայթել նրա գլխին:

Թշուառ նախամարդը... Իր անմիջական կարիքների ստրուկ, մերկ ու կիսաքաղց՝ նա խարխափում էր տիեզերական լաբիւրինթոսում, կրում էր շրջապատի բոլոր հարւածները, առանց հակազդել կարողանալու, փախչում էր զարզանդած՝ գիշատիչ գազաններից, կծկւում, գալարւում էր կայծակի հանդէպ, փոթորկի, ուրագանի միջոցին վազում էր լեղապատառ, առանց յետ նայելու, տարւած սարսափի միահեծան զգացումով...

Ահա թէ ինչու մենակ, կղզեացած չէր կարող նա մնալ, և հասարակական զարգացման արշալոյսին մենք ամենուրեք երկրագնդի վրայ հանդիպում ենք միայն մարդկային համայնքներ,—մեծ մասամբ կապւած արիւնակցական, ընտանեկան կապով:

Զարգացման անիւը առաջ է գլորւում, բնութիւնթշնամին միշտ աւելի և աւելի չէզոքացւում է և տեղի տալիս մարդ-թշնամուն: Մարդկային համախմբումը իր նախնական շրջանում մէկ նշանաբան ունէր — ընդհանուրի շահը. անհատը ոչինչ էր, նա կլանւում էր ընդհանրութեան մէջ, նա „զօրագնդի“ անդամ էր,— մի համր գինւոր, առանց ձայնի և իրաւունքի: Այդ վիճակի ներկայացուցիչն էր նահապետական հինաւուրց ընտանիքը, ուր միահեծան իշխանութիւնը պատկանում էր աւագներին, նահապետներին: Անհատը ժխտում էր

իր անհատականութիւնը, բայց և վարժւում էր այն գերագոյն առաքինութեան՝ անձնուրացութեան դըպրոցի մէջ, որ պիտի դառնար անկիւնաքարը ապագայ հոյակապ ազգային շէնքի։

Կռիւը ծնող է ամեն բանի, կռւի սկզբունքը նախագահում է քաղաքակրթութեան էվոլիւցիային։ Մշտնջենական կռւի վիճակը հարկադրել է որոշ հողի վրայ, որոշ սահմաններում՝ ապրող համայնքներին՝ մօտենալ իրար, ի մի ձուլել և այդպիսով հնարաւորութիւն ունենալ պաշտպանելու հեռաւոր ու անյայտ թշնամիների յարձակումներից։

Իսկ այդպիսի յարձակումների պատճառները շատ էին... Նախապատմական այդ ժամանակներում տարբեր աշխարհագրական վայրերում ապրող մարդկային համայնքները ունէին և տարբեր կուլտուրայի աստիճաններ։ Այն ժամանակ, երբ դեցուք մի կէտում, շնորհիւ միջավայրի նպաստաւոր պայմանների,—ջրերի առատութեան, հողերի պարարտութեան, նաւագնաց գետերի, բարեխառն կլիմայի, մետաղների հանքերի և այլն և այլն — մարդիկ արագ առաջադիմում են, ձուլում են մետաղներ, ընտանեցնում են վայրի անասուններին, զարգացնում են բոյսերի մշակութիւնը, մղում են առևտուր և դառնում հարուստ, բարգաւաճ համայնքներ, — մի այլ կէտում, շնորհիւ միջավայրի աննպաստ պայմանների՝ մարդիկ երկար ժամանակ մնում են հօրդայական, նոմադ վիճակում և չունենալով ապրուստի ուրիշ միջոց՝ դիմում են թալանի, աւազակութեան, ճիշտ այնպէս, ինչպէս այժմեան քրդերը։

Ահա մեծ մասամբ այդ երկրորդ տիպի համայնքներն են, որ բնական մղումով արշաւում էին առաջին տիպի համայնքների դէմ։

Այդ դրութիւնը տևել է, անշուշտ, երկար դարեր։

Խաղաղ, նստակեաց համայնքները այդ դարաւոր պատերազմների ընթացքում ապրելով ու կռւելով միասին, մէկ հողի վրայ, նման շահերից ու ձգտումներից մղւած, միշտ աւելի և աւելի մօտենում են իրար, ձուլւում են իրար հետ, — ստեղծւում է նրանց մէջ արիւնի ազգակցութիւն, որը հետզհետէ ամրապնդւում է և ուժեղանում ժառանգականութեամբ, մշակւում են նրման սովորութիւններ, պատմական աւանդութիւններ, ընդհանուր լեզու, կրօն, օրէնքներ և այլն և այլն։

Այդպէս են կազմակերպւել ազգային գերդաստանները։ Նրանք մեծացել են ժամանակի ընթացքում, ճիւղաւորւել են։ Նրանք զարգացել են համաձայն ամուր, ճակատագրական այն օրէնքների, որ բնութիւնը և տընտեսական կեանքը առաջադրել են նրանց և որոնք պայմանաւորել են նրանց ծագումը։

Այս. քանի դեռ նախնական փոքրիկ համայնքները — կամ ասենք՝ տոհմերը — ապրում էին բոլորն էլ թափառական վիճակում, չունենալով աշխատանքի մշակւած գործիքներ, պարապելով սոսկ ձկնորսութեամբ և խաշնարածութեամբ, — չկար նրանց համար հրամայական պահանջ՝ երբար հետ ձուլւելու։ Այնքա՞ն դեռ չնչին էր նրանց հարստութիւնը, որ չէր կարող հրապուրել թշնամիներին։

Այլ բան եղաւ, երբ գործիքները շատ թէ քիչ մշակւելով՝ մարդիկ վարժւեցին երկրագործութեան։ Խիտ անտառներից, լեռնոտ վայրերից նրանք իջան, գրաւեցին զատ-զատ համայնքներով ջրառատ, արգաւանդ դաշտավայրերը. աշխատանքը եռաց, արդիւնագործութիւնը ծաղկեց, լայնացաւ, բաժանւելով այլ և այլ ճիւղերի։ Զարգացաւ առևտուրը, փոխանակութիւնը հարևան համայնքների մէջ, աճեց մարդկանց թիւն ու հարստութիւնը. բայց դրա հետ միասին — այդտեղ ևս կար

մեդալի թարս կողմը — դրա հետ միասին աճեց հետաքրքրասէր թշնամու ահը, արտաքին վտանգը։

Եւ տեղի ունեցան հնադարեան անցեալում նոյնանման երևոյթներ, որոնց ականատես ենք նոր պատմութեան մէջ, — նօմադ, ռազմասէր տարրերի յարձակումներ՝ խաղաղ ու երկրագործ տարրերի վրայ, և մշտնջենական աւարառութիւններ... Ինչ որ կրել են համեմատաբար նոր ժամանակներում արևմտեան Եւրոպայի ազգաբնակութիւնները հունների, արաբների, մաջառների, սելջուկների ձեռքից՝ նոյնը կրել են անյիշատակ անցեալում — նոյնպիսի աւազակաբարոյ ցեղերի ձեռքից, — Չինաստանը, Եգիպտոսը, Միջագետքը, Հայաստանը և այլն։ Այդ վերջինը՝ ճակատագրի մի քստմնելի խաղով՝ դեռ այսօր ևս կրկնում է հասարակական էւոլիւցիայի այդ հինաւուրց, աղետալի ֆազը։

Եւ անդուլ մաքառումների ու արկածալի փորձութիւնների մէջ ամրապնդուեց համերաշխութեան կապը։ Հաղորդակցութիւնը առանձին համայնքների մէջ միշտ աւելի և աւելի կենդանացաւ, նրանց բառբառները ժամանակի ընթացքում միակերպուեցին, հարթելով ճանապարհը ընդհանուր ազգային լեզուի համար։ Անջատական, տարամերժ ոգին չքացաւ նրանց մէջ, տեղի տալով ընդհանուր ազգային ոգուն...

Ամբողջ դարեր են սահել, մինչև որ նախնական ազգային գերդաստաններից աստիճանաբար մշակուել է աւելի բարձր ձև հասարակական կենցաղի, աւելի բարձր և աւելի գիտակից մի անհատականութիւն, — ազգային պետութիւնը՝ իր պատշաճ օրգաններով։ Մենք այն տեսնում ենք գրեթէ ամեն տեղ և ամեն ժամանակ. ամեն մի ժողովուրդ, որ հասել է ինքնաճանաչութեան, ունեցել է իր պետութիւնը և կորցնելով այն, ձգտել է վերստին յետ նուաճել։

II

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ

Անհատ եւ համայնք. — Հասարակագիտական դէտերմինիզմ. — Գաղափարի որոշումը. — Տեսակէտներ. — Արիւնակցութիւն. — Լեզուի ու կրօնի նշանակութիւնը. — Ո՞ւր է „սուբստրատումը“...

Ազգայնութիւնը չէ ներկայանում մեզ, իբրև անհատների սոսկ հաւաքածու — փխրուն, վաղանցուկ — այլ իբրև օրգանական մի ամբողջութիւն։ Լոկ քանակութեան յարաբերութիւնը չէ, լոկ արտաքին, նիւթական նշանները չեն, որ ընորոշում են այս կամ այն ազգը, այս կամ այն ժողովուրդը. — կան սոցիալական-հոգեբանական խորունկ պատճառներ, որոնք երկար ժամանակ անխոնջ գործելով մարդկային այլազան համայնքների արգանդում, ստեղծում են նրանցից ազգային ուրոյն, առանձնայատուկ միութիւններ, իրենց էութեամբ մնայուն, յարատև։ Այդպիսի պատճառներ են՝ ներքին փոխադարձ համակրութիւնը, կամ զգայնական նմանութիւնը, ապա կամքերի ներդաշնակութիւնը, որից և բղխում է ընդհանրական ճիգը, համազգային գործակցութիւնը։

Անհատը այդ զարմանալի միութիւնների մէջ՝ չէ կարող այլ կերպ հասկացուիլ, բայց եթէ միայն իբրև մէկ անդամ այն կամքերի համակարգութեան, որոնց փոխադարձ յարաբերութիւնները կազմում են — Հեգելի արտայայտութեամբ — իւրաքանչիւր անդամի ըմբռնելի էութիւնը։

Այդ փաստի զօրութեամբ՝ դիցուք լեհ անհատը մեզ

ըմբռնելի և ճանաչելի է դառնում միմիայն իբրև անդամ զգայութիւնների և կամեցողութիւնների այն համակարգութեան, որը կազմում է լեհ ազգայնութիւնը և որը դարձնում է յիշեալ անհատին ոչ թէ միայն մարդ առհասարակ, այլ և լեհ։

Այդտեղից և առաջանում են ազգայնական տիպարները — ոչ ցեղերը։ Լեհ տիպարը հիմնականապէս տարբեր է ռուսից, չեխից, ռուսինից, սերբից, բուլգարից։ Իւրաքանչիւր մի ազգ ունի իր մէջ այն, ինչ որ սոցիոլոգիան անուանում է հասարակագիտական դէտերմինիզմ (պատճառական շղթայակցութիւն)։ Իւրաքանչիւր մի ազգ ունի մտքերի և զգացումների մի ինքնատիպ հիւսուածք, որ առաջ է գալիս համայնքի ու անհատների միջանձնական փոխազդեցութիւնից։ Մտքերի, զգացումների և կամքերի այդ հիւսուածքն է, որ անցնելով ժառանգաբար սերնդից սերունդ՝ կազմում է ժողովրդի ոգին, ազգային գիտակցութիւնը։

Այո՛. ինչպէս օրգանական բջիջների մէջ, այնպէս և համայնքի անդամների մէջ՝ կայ միջանձնական փոխազդեցութիւն (Gegenwirkung)։ Պատմական էվոլիւցիայի ընթացքում մերթ համայնքն է իր բարքերի ուժով բարձրացնում ընկած անհատին, մերթ անհատն է իր արտակարգ առաքինութիւններով արթնացնում ու աղնուացնում համայնքը։ Մեր „անձնաւորութիւնը“ մեր ֆիզիքական, մտաւոր ու բարոյական ես-ը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հիւսուածք, որի նիւթերը մեծ մասամբ փոխառուած են ընդհանուր ազգային շտեմարանից. իսկ այդ վերջինը ուրիշ բան չէ, բայց եթէ արդիւնք բոլոր անհատների համերաշխ գործակցութեան։

* * *

Ինչպէ՞ս որոշել ազգայնութեան կամ հայրենիքի գաղափարը, նրա ճշգրիտ էութիւնը։ Մի կնճռոտ հարց է դա, որ

զբաղեցրել թէօրետիկոսներին։ Կան գաղափարներ, որոնք տրամաբանական յստակ որոշման չեն ենթարկւում։

Ազգայնութիւնը հետաքրքրում է և՛ էտնոլոգին (ցեղաբան) և սոցիոլոգին և՛ նոյնիսկ իրաւագէտին ու քաղաքագէտին։ Իւրաքանչիւրը նրանցից՝ հարցը իր տեսակէտով լուսաբանելով՝ յանգում է մի ջոկ եզրակացութեան, որը ներկայացնում է գաղափարի էութեան մի որոշ կողմը։ Ցեղաբանը, հետևելով բնագիտական մեթոդին, առաջ է բերում ընտրողութեան, ժառանգականութեան, յարմարումի և այլն օրէնքները, որ և կիրառում է մարդատեսակների կամ ցեղերի վրայ, որոնք տարբերւում են գանգի կազմութեամբ, կաշի, մազի, աչքերի գոյնով և այլն։ Սոցիոլոգը, հասարակաբանը, ինչպէս վերը տեսանք, քննում է մարդուն ոչ միայն իբրև տիեզերական կոյր ուժերի ծնունդ, այլև իբրև մի գոյութիւն, որ ընդունակ է մտածել, զգալ և կամենալ։ Թէև մարդկային այդ երեք կարողութիւնները վերջին քննութեամբ պայմանաւորւում են նոյն տիեզերական ուժերով, այնուամենայնիւ, նրանք ունեն իրենց զարգացման ուրոյն պատմութիւնը և ենթակայ են սոցիոլոգիային, հասարակական գիտութեան։

Վերջապէս, իրաւաբանը և քաղաքագէտը ազգային գաղափարի հետ կապում են որոշ իրաւական, քաղաքական արտօնութիւններ։

Եւ առաջ է գալիս խառնաշփոթութիւն։ Եւ մենք դժուարանում ենք գտնել մի բանաձև, որ կիրառուէր հաւասարապէս բոլոր երկրների ու ժողովուրդների վրայ։

Ընդհանուր ծագում, ֆիզիքական ու հոգեկան նմանութիւններ, ընդհանուր հող, լեզու, կրօն, ընդհանուր պատմութիւն և այլն և այլն, — ահա այն գործօնները, որոնք զատ-զատ կամ մի քանիսը միասին, կամ բոլորը մէկտեղ՝ կոչւած են լուսաբանել ազգայնութեան խմաստը,

բայց և անկարող են մատակարարել մի զուտ գիտական, բաւարար որոշում։

Անշուշտ, մեծ է ցեղագրական պայմանների, ինչպէս նաև լեզուի ու կրօնի ազդեցութիւնը ազգութիւնների զարգացման վրայ։ Ո՞վ կարող է ուրանալ, որ ֆիզիքական ընդհանուր ծագումը հէնց ի սկզբանէ աղբիւր է եղել նաև հոգեկան համակրութիւնների։ Ո՞վ կարող է ժխտել լեզուի հսկայական ուժը, որը մի ժողովրդի դարաւոր փորձութիւնների միջոցին մթերում ու պահպանում է հարազատութեամբ ընդհանուր բարքերն ու աւանդութիւնները . . .

Լեզուն բաժանում է մի ազգի ճակատագիրը, մշակում, հասունանում է նրա ինքնաճանաչութեան զարգացման հետ միասին. ամբարւում ու յաւերժանում է կրօնական ծէսերի, օրէնսդրական ակտերի, գրական յիշատակարանների մէջ և այլն։ Երբ այդ թանկագին գանձը սկսում է սպառուել, երբ մայրենի լեզուն ըսկսում է խեղաթիւրուել կամ իսպառ դուրս նետուել գործածութիւնից, — դա արդէն նշան է ազգութեան այլասերման։ Այնքան մեծ է լեզուի ազդեցութիւնը, որ սոցիոլոգներից ոմանք նրա վրայ են հիմնում ազգայնութիւնը։ Այդ նոյն կարծիքի արտայայտութիւնն է Արնտի ծանօթ ոտանաւորը.

Was ist des Deutschen Vaterland?
So nenne endlich mir das Land,
So weit die deutsche Zunge klingt,
Und Gott im Himmel Lieder singt. . .

(Որն է գերմանացու հայրենիքը,
Ցոյց տուր ինձ, վերջապէս, այդ երկիրը.
— Նա տարածւում է ամեն տեղ,
Ուր գերմանական լեզուն է հնչում,
Ուր Աստուծն երկնքում լիրեր՝ է երգում...)

՝ Երգեր։

Անժխտելի է և կրօնի դերը։ Նրա ազդեցութիւնը, մեծապէս թուլացած մեր օրերում, հզօր էր վաղեմի ժամանակներում։ „Ամեն մի կրօն սկզբներում մի ազգութիւն էր“, — ասում է յայտնի սոցիոլոգ-կրօնագէտ Մաքս Միւլլէր։ Արդարև։ Կրօնը մարդկութեան նախնական շրջանում միաւորող կապն էր գերդաստանի մէջ, ապա քաղաքում (cité) և վերջապէս պետութեան մէջ։ Յունական քաղաքները, (Սպարտա, Ա̀թէնք և այլն), որոնք սկզբում ներկայացնում էին մի մի հայրենիք և ուր հելլենիզմի, յոյն ազգայնութեան սաղմերը դրուեցին,— յունական քաղաքները ապրում էին աստուածների բրոնակալութեան տակ։ Եւ երբ Սոկրատէսին, աշխարհիս մեծագոյն փիլիսոփաներից մէկին՝ մահուան էին դատապարտում, նրա դահիճները պատճառաբանում էին, թէ նա մեղանչել է հայրենիքի դէմ, քանի որ մեղանչել է աստուածների դէմ։

Քանի՞ քանի ազգեր պահպանել են դարերի ընթացքում իրենց ինքնուրոյնութիւնը, շնորհիւ իրենց կրօնական միութեան. . .

Այնուամենայնիւ, կան ազգութիւններ և այդ նշանաւոր գործօններից դուրս, — կամ լեզուից ու կրօնից, կամ թէ աշխարհագրական և ցեղագրական պայմաններից։ Ոչ մէկը դրանցից չէ ներկայանում իբրև տրամաբանօրէն անհրաժեշտ պայման՝ մի ազգայնութիւն կազմելու համար։

Ազգ է Շվէյցարիան, որ ունի առնւազը երեք տարբեր ցեղեր, երեք լեզուներ և նոյնքան կրօններ։ Ազգ է համարւում հրէութիւնը, որ վաղուց զրկուած հայրենի հողից՝ ծաւալուել է բովանդակ երկրագնդի վրայ, և ամեն տեղ ցոյց է տալիս օրինակելի համերաշխութիւն։

Ազգ է Մեծ-Բրիտանիան, որ նոյնպէս կազմուած է տարբեր ցեղերից — կելտերից, սաքսերից ու նորմաններից։

ՅՅԱԳ 6 — 1001

Որտեղ է մնում ազգայնական գաղափարի „սուբստրատումը“, նրա ամենաէական յատկանիշը...

Նա մնում է անըմբռնելի, — մենք չենք կարող որոշել նրան, ոչ էլ նկարագրել լիակատար կերպով։ Նոյնիսկ շատ որոշ անհատականութեան տէր ազգութիւնները դժուարանում ենք բնորոշել գիտականօրէն։ Մի գաղտնիք կայ ազգայնութեան գաղափարի մէջ, որ երբէք չէ դրսևորւում, որ խոյս է տալիս մեր դիտողութիւնից — մի գաղտնիք կայ, որ աւելի բարձր է, աւելի հարուստ, աւելի խորունկ, աւելի ընդարձակ, քան թէ բոլոր բնորոշ գծերը, որ մենք կարող ենք թուել — լեզու, կրօն, արիւնակցութիւն և այլն։

Յամենայն դէպս, մենք գործ ունենք մի կենդանի իրողութեան հետ, — մեր առջև կանգնած է մի շատ կոնկրետ անհատականութիւն, որ իրօք մէկ է իր բնորոշ գծերով, տարբեր ուրիշներից։

Ազգ կայ ամեն տեղ, ուր՝ ինչպէս ասում է Ստիւարտ Միլլ՝ մարդիկ միացած են ընդհանուր համակրութիւններով, որոնց զօրութեամբ նրանք հակուած են ոչ միայն գործելու համերաշխութեամբ և ապրելու միևնոյն կառավարութեան տակ, այլ և տենչալու, որ այդ կառավարութիւնը կազմեն հէնց իրենք, կամ իրենց մի մասը։

Ազգ կայ ամեն տեղ, ուր՝ ինչպէս ասում է Ռընան՝ կայ դարաւոր մի անցեալ, հիւսուած ճիգերից ու զոհողութիւններից, ուր կայ մի անցեալ՝ փայլուն, հերոսական սխրագործութիւնների, ուր կան պատմական աւանդութիւններ... Այն կուլտները, որ դարերի ընթացքում մղել է մի համայնք ընդհանուր թշնամու դէմ, այն ուրախութիւնները, որ նա ունեցել է յաղթանակներից, այն տառապանքները, որ նա ունեցել է պարտութիւններից, այն երգերը, որ նա հիւսել է յաղթանակների ու պարտութիւնների առթիւ, — ահա այդ վսեմ

համերաշխութեան անունն է ազգ։ Մենք ան կոչում ենք նաև հայրենիք։ Երկու բառերի մէջ տարբերութիւնը աւելի ձևական է, քան թէ էական։

Նա այնքան կենդանի է, այդ համերաշխութիւնը, մարդկանց սրտերում, որ դեռ հնագոյներեան, հոմերական ժամանակներում բարձրաձայն հռչակւում էր կուիրյանուն հայրենիքի, և յունական հանճարը բացականչում էր Հոմերոսի բերանով. „Մեռէք ու մի՛ զղջաք, որովհետև պանծալի բան է՝ մեռնել հայրենիքի համար“...

III

ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԻԴԵԱԼԸ

Հին եւ միջին դարերում. — Նորագոյն պատմութեան մէջ. — Մեծ Յեղափոխութիւնը եւ „ազգայնութեան սկզբունքը“. — Ազատագրական կռիւները. — Արեւելքում եւ Արեւմուտքում. — Ստրուկ ազգերի վերածնութիւնը:

Չենք ուզում գծել մանրամասնօրէն ազգայնական այդ համերաշխութեան էւօլիւցիան, նրա պատմութիւնը իր նախնական շրջանից սկսած մինչև մեր օրերը: Ազգային գաղափարը արտայայտուել է, անշուշտ, թէ հնադարեան և թէ միջնադարեան կեանքում, բայց արտայայտուել է թոյլ, երկչոտ կերպով:

Հին դարերում անթիւ, այլազան ազգութիւնները կորչում էին Հռովմէական տիրապետութեան համայնակուլ հոսանքի մէջ,—թագաւորող գերութեան գրկում անկարող էր փթթիլ ազգային գաղափարը:

Միջին դարերում բովանդակ Եւրոպան մատնուած էր մի կողմից աւատականութեան, միւս կողմից՝ կաթոլիկ եկեղեցու տիրապետութեանը: Ազգութեան գաղափարը նսեմանում էր կաթոլիկութեան գաղափարի առջև:

Պէտք էր քաղաքակրթութեան մի յայտնի աստիճան, պէտք էր պատմական մի յատուկ մթնոլորտ, որպէսզի ա ն կ ա խ Հ ա յ ր ե ն ի ք ի Իդեալը արտայայտուէր իր բոլոր ուժով և իր բոլոր վեհութեամբ:

Ազգերը գոյութիւն ունէին, իբրև ցեղագրական միութիւններ, լոկ բնազդօրէն, առանց ազգային ինքնագիտակցութեան: Իսկ այդ վերջինը կարող էր արթնանալ այն երկրներում միայն, ուր — մտաւոր ու քաղաքական

առաջադիմութեան շնորհիւ — ա ն հ ա տ ը ինքն էր սթափւում և ձգտում խորտակել իրեն կաշկանդող շղթաները, միահեծան տէր դառնալ իր ճակատագրին: Միջնադարեան խոր գիշերի մէջ ազգայնական տարբերութիւնները գրեթէ ոչ մի կարևորութիւն չունէին քաղաքական առաջադիմութեան համար: Քանի՞ քանի ազգեր՝ խեղճ ու անլեզու նախիրների պէս, այս կամ այն բռնաւորի քմահաճոյքով փոխադրւում էին մէկ ըծից միւսը, բաժանւում էին, վերստին ձուլւում, վերստին բաժանւում և այդպէս անվերջ:

Եթէ մի Լուդովիկոս 14ՐԴ կամ թէ մի Կարլոս 12ՐԴ ձգտում էին տիեզերական հրամանատարութեան, պատճառը այն էր, որ ազգերը դեռ ևս իրաւունք չունէին տնօրինելու իրենց ճակատագիրը... Բայց կամաց կամաց նրանք զգաստացան և գտան որ անհրաժեշտ է խզել մարդկանց հին համախմբումները...

Ազգայնութիւնը, իբրև ոչ միայն ցեղագրական փաստ, այլ և իբրև քաղաքական-իրաւաբանական միութիւն, իբրև մի ուրոյն մարմին, իր յատուկ, անձեռնմխելի իրաւունքներով—ազգայնութիւնը իբրև այդպիսի մի մարմին, ծնունդ առաւ և ձևակերպւեց պատմական այն մեծ, աշխարհասասան փոթորկի միջոցին, որի անունն է Ֆ ր ա ն ս ի ա կ ա ն Յ ե ղ ա փ ո խ ո ւ թ ի ւ ն:

Ազատութեան և եղբայրութեան գաղափարների հետ՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը հռչակեց հանդիսաւոր կերպով ա զ գ ե ր ի ա ն բ ռ ն ա բ ա ր ե լ ի ո ւ թ ի ւ ն ը: 1792 թւի Ազգային Համագումար Ատեանը (la Convention Nationale) խոստանում էր նոյնիսկ „եղբայրական օգնութիւն“ այն բոլոր ժողովուրդներին, որոնք կ'ուզէին ձեռք բերել իրենց ազատութիւնը: 1795-ին „Մարդկային Իրաւունքների Ծանուցման“ մէջ (la Déclaration des Droits de l'Homme) վճռական կերպով յայտարարւում էր, որ ոչ մի ազգ

իրաւունք չունի խառնուել մի ուրիշ ազգի կառավարութեան մէջ, որ ժողովուրդները անկախ են, ինքնիշխան, որքան էլ սահմանափակ լինի նրանցից իւրաքանչիւրի թիւն ու գրաւած հողի տարածութիւնը։

Պանծալի թւակա՞ն։ Հիմնւում էր մի նոր միջազգային իրաւունք։ Յեղափոխութիւնը՝ մոլեգին ու յաղթական՝ ուզում էր մէկ թափով տապալել համաշխարհային բռնապետութիւնը, ազատել շղթայուած ժողովուրդներին, կեանք ու ոգի տալ մարող ազգերին։

Յուսոյ մի հսկայական ճառագայթ էր այդ, որ վայրկենաբար լուսաւորեց տառապող երկրագունդը... Դժբախտաբար, Յեղափոխութեան յաղթանակը կարճատև եղաւ։ Շուտով վրայ հասաւ Նապոլէօնեան ռէակցիան, իր անդադրում ու արիւնահեղ պատերազմներով, ուր կոխկռտւում ու սրբապղծւում էին ժողովուրդների իրաւունքները...

Սակայն — չարիքը որքա՞ն յաճախ բարիք է ծնում — հէնց այդ պատերազմներն էին, որ մեծ, անսովոր թռիչք հաղորդեցին ազգայնական շարժումներին, հէնց նրանք էին, որ խթան եղան ազգերի վերածնութեան։

Ազգային անկախ գոյութեան սկզբունքը՝ ղեկավարող շարժառիթն էր Նապոլէօնի դէմ սկսած կռիւների։

1813 թւին, երբ Գերմանիան դեռ ևս գրաւած էր ֆրանսիական զօրքերով, երբ Կորսիկացի տիտանը՝ համաշխարհային տիրապետութեան իր տենչանքներից ակամայ հրաժարւելու վրայ էր արդէն, երբ պետութիւնների հզօր դաշնակցութիւնը պատրաստւում էր սանձահարել նրան, — ամբողջ գերմանական ժողովուրդը՝ իր ազատութեան գաղափարով վառուած՝ իբրև մէկ մարդ գրոհ էր տալիս Նապոլէօնեան տիրապետութեան դէմ... Այն օրերն էին, երբ բանաստեղծ Կէօրներ հնչեցնում էր իր դիւթիչ երգը. „Ա՛ճիր գերմանական հայրենիք

մեր դիակների վրայ“... Իսկ մեծ մետաֆիզիկ-փիլիսոփա Ֆիխտէ, իր անձուկ առանձնասենեակից դուրս նետւելով, մոլեգին ճառերով բոցավառում էր իր հայրենակիցներին։

Եւ — ո՜ պատմութեան ծաղը — Բօնապարտին հալածող դաշնակից պետութիւնները իրենք էին հանդիսանում ազատութեան ասպետներ, իրենք էին բարձրաձայն յորդորում. „Ազա՛տ եղէք, ժողովուրդներ“... Սին խօսքեր, ի հարկէ; որ շռայլում էին թագաւորները տագնապի րոպէին, երբ պէտք էր ժողովուրդների վրայ կրթնելով, յաղթահարել գոռող կայսրապետին։ Անցաւ վտանգը, և ազատութեան շռայլ խոստումները մոռացութեան տրւին։ Ռուսաստանն էր հականապոլէօնեան շարժման ղեկավարը և նրա կամքն անցաւ։ Դաշնակից բռնակալները ոչ միայն չազատեցին ժողովուրդներին, այլ աւելի ևս ամրապնդեցին նրանց գերութեան շղթաները, դնելով նրանց գլխին մի վեթխարի ժանդարմ, որ անուանեցին „Սրբազան դաշնակցութիւն“...

„Քրիստոնէական ոգով տոգորուած“՝ բռնաւորները երդւում էին Վիեննայի մէջ՝ (1815 թ.) ընդհանուր ուժերով „հսկելու ազգերի խաղաղութեան վրայ“, պահպանելու քաղաքական հաւասարակշռութիւնը, statu quo-ն...

Երբէք ազգերի դէմ այդքան ահարկու դաւ չէր կազմակերպւել։ Եւ գուցէ երբէք ազատութեան դահիճները այդքան անհեթեթ չէին եղել իրենց յայտարարութիւնների մէջ... „Քրիստոնէական եղբայրութիւն“ էին հռչակում նրանք, իսկ այդ միջոցին լսւում էր յաշտուած Լեհաստանի հեծկլտոցը, ողբում էր Իտալիան, որին մատնել էին աւստրիական բռնապետութեանը, ողբում էր Բելգիան, որին ստորադրել էին օտար Հոլանդիային, ողբում էին գերմանացիք, որոնք քիչ առաջ ոտքի էին կանգնել՝ կուելու յանուն ընդհանուր հայրե-

նիքի ազատագրութեան, իսկ այժմ ենթարկւում էին բազմաթիւ իշխանների կամայականութիւններին։ Ամեն տեղ լաց ու հառաչանք։ Ամեն տեղ ոտնահարւում էր ազգայնական պատիւը, մարդկային իրաւունքը։ Եւրոպան իրար մէջ բաժանում էին միապետները, ինչպէս կը բաժանեն հողային անբնակ մի տարածութիւն։ Զուլում էին իրար հետ տարբեր ազգութիւններ, միանգամայն տարբեր պատմական աւանդութիւններով։ Բովանդակ ցամաքի ազգաբնակութիւնը ներկայանում էր նրանց, որպէս անբան անասունների մի հսկայական հօտ, որ պէտք էր առաջ քշել մտրակով ու խարազանով և որը անմռունչ, հլու հնազանդութեամբ պարտաւոր էր հետևել իր „աստուածընտիր“ առաջնորդներին...

Սակայն իրերի հոսանքը աւելի ուժեղ է, քան ամենահզօր բռնակալը։ Ազգերի ազատութեան գաղափարը աճեց, զարգացաւ նոյնիսկ „Սրբազան Դաշնակցութեան“ մահարոյր գրկում։ Ազատ հայրենիքի իդէալը, որ հոգի ու մարմին էր առել Մեծ Յեղափոխութեան ցնցումների մէջ, վարակել էր արդէն գերութեան տակ հեծող ժողովուրդներին և Մետերնիխների ամենահանճարեղ դաւերն անգամ չէին կարող կանխել մերձեցող փոթորիկը։ Երբ այդպիսի մի իդէալ ծնունդ է առնում ու ձևակերպւում մարդկանց գիտակցութեան մէջ, նա ձգտում է անդիմադրելի կերպով հարթել իր ճանապարհը, ոչնչացնելով բոլոր հինաւուրց կաղապարները, բոլոր քարացած կաստաները, բոլոր աղնւականութիւններն ու իշխանութիւնները, որոնք յաւիտեան թագաւորելու տենչանքն ունին։ Երբ գաղափարը կաշկանդւում է իր բնականոն առաջխաղացութեան մէջ, նա դիմում է յեղաշրջումների ու կատաստրոֆների, նա դիմում է մեծ մարդկանց օգնութեան, բայց աւելի յաճախ նա կոչ է անում ժողովրդային մեծ զանգուածներին, մասսաներին... Նրա յաղթական պատգամի առաջ յետ է նահանջում

ամենանրբացած դիւանագիտութիւնը, օգն են ցնդում „հաւասարակշռութեան“, statu quo-ի թէորիաները...

Ազատ հայրենիքը պէտք է յաղթանակէր, իբրև պահանջ քաղաքակրթութեան, իբրև պօստուլատ համամարդկային հոգեբանութեան։

Եւրոպական ցամաքի վրայ առժամապէս կաշկանդւած՝ ազատութեան ոգին խօսեց մի հեռաւոր անկիւնում, արեւելեան մի փոքրիկ ժողովրդի ծոցում, Յունաստանի մէջ։ Թիւրքական բռնութեան այդ մեծ զոհին էր վիճակւած՝ առաջին անգամ Արևելքում բարձրացնել ազատութեան դրօշը՝ օտարի լծի դէմ։

Այդ երկրում, որ աւելի մեծ է իր պատմական յիշատակներով, քան թէ գրաւած հողի տարածութեամբ ու բնակիչների թւով տասիններորդ դարի սկզբներում առաջին անգամը երևան եկաւ ազգայնական գիտակցութիւնը մի ժողովրդի, որ ուզում էր ազատ ապրել իր նախնիքների քրտինքով ցողւած հայրենիքի մէջ։

Զարմանալի քմահաճոյքներ ունի պատմութեան փիլիսոփայութիւնը։ Ո՞վ կարող էր կարծել որ հայրենիքի գաղափարը աւելի շուտ պիտի յաղթանակէր դարերով ստրկացւած այն հեռաւոր խորշերում, քան թէ անհամեմատ աւելի քաղաքակիրթ Արևմուտքում...

Ապստամբութիւնը պայթեց։ Կանարիների և Բօցարիների ռազմակոչը հազարաւոր արձագանքներով շառաչեց Եւրոպայում։ Հանրային կարծիքը խլրատց և ցնծութեամբ գրկեց հելլենների դատը։ Մարդկային վեհանձնութեան հազւադէպ վայրկեաններ... Արևմուտքի — տակաւին ֆէօդալական, միապետական Արևմուտքի — ամբողջ ինտելիգենտ ընդհանրութիւնն էր, որ Բայրոնների ու Շատօբրիանների առաջնորդութեամբ արշաւում էր օսմանեան բռնապետութեան դէմ՝ յանուն ստրկացած ազգերի անկախութեան, յանուն Հայրենիքի անբռնաբարելի իրաւունքների։

Դիւանագիտութիւնն անգամ, երկար տատանումներից յետոյ, օգնութեան հասաւ կուռոյ Յունաստանին — հաճելի էր սպիտակ ցարին՝ հարուածել Թիւրքիայի ամբողջութեանը — և այդպիսով „Սրբազան Դաշնակցութեան“ հիմքերը խախտուեցին. . .

Եւ արեան գետերի, անբաւ զոհողութիւնների գնով վերածնուեց փիլիսոփայութեան ու գեղարուեստի հռչակաւոր ոբրանը, իր վերածնութեամբ նուիրագործելով „Ազգայնութեան Սկզբունքը“։

Ձենք կանգ առնում մանրամասների վրայ։ Թէ ինչպէս են զարգացել, ինչ պայմաններում են վերածնուել այլ և այլ ազգերը, դա առարկայ է պատմագրութեան, — մենք միայն հետևում ենք գաղափարի աստիճանական առաջադիմութեան։

Սերբերը հետևեցին յոյների օրինակին, տաճկահպատակ ուրիշ ազգերը ևս յաջորդաբար պարզեցին անկախութեան դրօշը և Տաճկաստան կոչուած վիթխարի դիակը հետզհետէ անդամահատուեց, յարութիւն տալով դարերով նահատակ ժողովուրդներին։ Պատմական մի անդրդուելի օրէնք էր այդ աստիճանական անդամահատումը, որ դեռ չէ ասել իր վերջին խօսքը։

Ստրուկ ազգերի անկախութեան գաղափարը միշտ աւելի մեծ խանդով արծարծուեց նաև եւրոպական Արևմուտքում։ Ազատութեան ոգին տասնիններորդ դարում, կարելի է ասել, դուրս կոչեց անյայտութեան անդնդից անկախ, ինքնավար ազգերի մի ամբողջ շարան — Բելգիա, Ունգարիա, Իտալիա, Յունաստան, Սերբիա, Ռումանիա, Բուլգարիա և այլն, որոնք մինչ այն՝ սոսկ ցեղագրական արտայայտութիւններ էին, առանց քաղաքական յատկանութիւնների, այժմ դարձան մի մի ազգային պետութիւններ, իրենց ինքնատիպ, ուրոյն կերպարանքով, — մի մի գործօններ քաղաքակրթութեան։

IV

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ

Հայրենասիրութիւն եւ հայրենամոլութիւն. — Ազգայնական կռիւներ. — Ինչպէ՞ս հաշտեցնել ազգայնութիւնը մարդկայնութեան հետ. — Տեսակէտներ. — Սօցիալիզմը եւ միջազգայնութեան դաւանանքը. — „Կոմունիստական Մանիֆէստ“. — Աշխատաւորները հայրենիք չունե՞ն...

Աւա՜ղ հայրենիքի գաղափարը, ազգային անկախութեան վեհ սկզբունքը ունեցաւ և իր ստերջին կողմերը. . . Ինքը գաղափարը մեղաւոր չէր այդտեղ, — մեղաւոր էր անզուսպ ծայրայեղութեան ոգին։ Շովինիզմ, նեաճողական տենդ, ազգերի անհաշտ հակամարտութիւն, — ահա այդ ստերները։

Մեծ գաղափարներին ասես վիճակուած է միշտ խեղաթիւրուել ու այլասերուել։ Հայրենիքի գաղափարը նոյն ճակատագիրն ունեցաւ, ինչ որ ազատութեան գաղափարը Մեծ Յեղափոխութեան միջոցին։ Երբ այդ վերջինը թափով, արագութեամբ հաստատեց բուրժուազական ազատութեան ռէժիմը, գրեթէ անմիջապէս հետևեց նրան սարսափելի հակահարուածը, — խանդավառութեան սրբազան կրակը փոխարկուեց շուտով մի մռայլ ու ահաւոր խարոյկի, որը անյագ լափում էր ազատութեան զինուորներին։

Այո. հայրենիքի, ազգայնութեան պաշտամունքը ևս ունեցել է և ունի տակաւին իր Եակոբինները, իր Ռոբեսպիէռներն ու Մարատները։ Նրանց բնորոշ գծերն են ամեն տեղ՝ ատելութիւն և սանձարձակ մոլեգնութիւն։

Ոչ մի ազգ, դժբախտաբար, զերծ չէ „ազգայնական նախապաշարումներից“. . . Ընդամ արևմտեան հասարակութիւնների մէջ՝ միջին քաղաքացին, իր ազգային հըպարտութիւնը հասցնելով գռռոզութեան՝ հակուած է ներբողել իր հայրենիքի առաքինութիւնները և նսեմացնել ուրիշ, մանաւանդ հակառակորդ ազգերին։ Ազգային դրօշը հանդիսանում է յաճախ, որպէս խորհրդանշան տխուր, քսմնելի արարողութիւնների. նրա անունով սրբագործւում են ամենազազրելի ոճիրները ընդդէմ մարդկայնութեան . . .

Եւ այդ ողբալի դրութեան արտայայտութիւնն է այսօր քաղաքակիրթ մարդկութեան վրայ կօշմարի պէս ծանրացող սպառազէն խաղաղութիւնը, ուր անկախ, վերածնուած, լուսաւոր ազգերը, ոտից ցգլուխ զինուած՝ պատրաստ են ամեն վայրկեան գրոհ տալ իրար դէմ և չնչին պատրուակներով արեան գետեր հոսեցնել . . .

Ինչպէս խուսափել այդ այլանդակ ծայրայեղութիւններից, ինչպէս արդեօք զուգադրել, հաշտեցնել հայրենիքի սէրը և սէրը դէպի համայն մարդկութիւնը. . . Ահա մի մեծ հարց, որ մեր օրերում այնքան սաստիկ յուզումէ կրքերը և այնքա՜ն հրատապ այժմէութիւն է վայելում։ Խաղաղութեան առաքեալներ, կրօնի վարդապետներ, փիլիսոփաներ և ամեն կարգի մարդասէրներ առաջարկել են լուծման այլ և այլ եղանակներ. . . Բայց նրանք բոլորն էլ—քրիստոնէութեան առաջին օրերից ի վեր — պոռոտ են գալիս կախարդական շրջագծի մէջ և անկարող են տալ արմատական, իրական լուծում։

Քրիստոնէութիւնը սկզբունքով վերացրեց ատելութիւնը և քարոզեց սէր ու եղբայրութիւն բոլոր մարդկանց մէջ։ Բայց — հակասելով իր հիմնական սկզբունքին — նա թողեց յարատևել անհաւասարութիւնը՝

հարստի ու աղքատի, տիրոջ ու հպատակի, բռնաւորի ու ստրկի։ Աւետարանը մուտք գործեց ամեն տեղ, դարձաւ տիեզերական, բայց մարդիկ շարունակեցին խողխողել իրար, աշխարհը շարունակեց թատերաբեմ լինել Մովսիսական դժնդակ օրէնքի՝ „ակն ընդ ակն“ի արհաւիրքների. . .

Զօգնեցին կրօնները, չօգնեցին և հանճարեղ փիլիսոփաները իրենց անհամար բարոյագիտական կողէքներով, օրինագրքերով։ Մտքի տիտանները տարիների ընթացքում ճառեցին „Գերագոյն Բարիքի“ և „Կատեգորիկ հրամայական“-ների մասին, կառուցեցին տիեզերական խաղաղութեան հոյակապ ծրագիրներ . . . բայց նրանք բոլորն էլ սապնի փչուկների պէս օդն էին ցնդում, զարնելով իրականութեան անսասան ապառաժին։

Բարոյական քարոզներ։ Ի՞նչ է նրանց դերը հասարակական ցաւերի ովկիանում. . .

Բայց ահա հասունացաւ Սոցիալիզմի վարդապետութիւնը։ Նա ձգտեց դուրս վանել սոցիոլոգիայի աշխարհից բարոյագիտական մարդանքները և յենուելով առողջ, ռէալիստ աշխարհայեցութեան վրայ՝ շեշտեց, որ տիեզերական չարիքները մի անգամ ընդմիշտ վերացնելու համար՝ պէտք է վերացնել նրանց սնունդ տուող պատճառները,—տնտեսական և բարոյական հարստահարութեան բոլոր ձևերը։ Միջազգային խաղաղութիւնն ու եղբայրութիւնը վեհ իդէալներ են, բայց նրանց հասնելու համար պէտք էր կոչ անել դրական գործօններ, պէտք էր հրատարակել չարիքների դէմ անողոք կռիւ. . .

Պէտք էր ոչնչացնել դասակարգերը, քանի որ դասակարգային տիրապետութիւնն է յաճախ ծնունդ տալիս աղգերի մրցման, շովինիզմի և պատերազմների։ Պէտք էր ոչնչացնել բուրժուազական մասնաւոր սեփականութիւնը, քանի որ նա է մայր-պատճառը դասակարգային բա-

ժանուՄՄերի և բիւրաւոր չարիքների։

Եւ սոցիալիզմը հրապարակ եկաւ, մի ձեռքում բըռնած սիրոյ աւետարանը — իր իդէալը — միւս ձեռքում՝ սուրը, գերագոյն միջոցը դէպի այդ իդէալը։

Նա հրապարակ եկաւ մի ջ ա զ գ ա յ ն ո ւ թ ե ա ն (Internationalisme) դաւանանքով և յայտնուեց ամենազօրեղ հակակշիռը ազգայնամոլ ծայրահեղութիւնների և ազգայնական հակամարտութեան. . .

* * *

1871 թուականին էր. պատմական մի մեծ, արիւնոտ դրամայից յետոյ, երբ դիւցազնական Ֆրանսիան, ուժասպառ, յաղթահարուած, փռուել էր Բիսմարկի ոտքերի տակ և ամբողջ միացեալ Գերմանիան, շովինիզմի արբեցութեան մէջ, խրախճանքներ էր կատարում, „Deutschland über Alles!„ որոտալով, յանկարծ, բոլորովին անսպասելի կերպով լսեցին գերմանական Ռայխստագի մէջ, ազգային այդ գերագոյն հիմնարկութեան մէջ, բոլորի շանթալից ձայներ, ցասման աղաղակներ բիսմարկեան քաղաքականութեան դէմ. . Երկու գերմանացի պատգամաւորներ էին դրանք, որ քաղաքացիական անվնասն արիութեամբ, ամբողջ Ռայխստագի գոռում-գոչումների մէջ՝ իրենց գարշանքն էին յայտնում օրուայ դըժընդակ հերոսին, նշանակում էին Էլզաս-Լոտարինգիայի „յափշտակումը“ և իրենց եղբայրական ողջոյնն էին յղում ֆրանսիական պրոլետարիատին։

Երկու սոցիալիստներ էին—Բ Է բ Է լ և Լ ի բ կ ն ե խ տ։ Բիսմարկեան հայրենիքը անիծեց նրանց, իսկ բուն քաղաքակիրթ աշխարհը, բոլոր ազնիւ մարդիկ հրճուանք զգացին երկու պերճախօս առաքեալների հանդէպ, որոնք խիզախեցին կարել ազգային նախապաշարումների լեռը և կանգնել զուտ մ ա ր դ կ ա յ ի ն տեսակէտի վրայ։

Այդ վերջինը սոցիալիզմի տեսակէտն էր

և երկու պատգամաւորները իրենց տարրական պարտքն էին կատարում, իբրև սոցիալիստ։

Առաջին անգամ այդ տեսակէտը որոշ ու յստակ ծանուցուեց աշխարհին Մարքս-Ենգելսեան հռչակաւոր „Մանիֆէստի“ մէջ, որը 1848 թուի փետրուարեան մրրկոտ օրերի վաղորդայնին՝ հրապարակ նետեց ծանօթ մարտակոչը. „Պ ր օ լ ե տ ա ր ն ե ր բ ո լ ո ր ե ր կ ր ն ե ր ի՝ մ ի ա ց է ք“. . .

Երկար տարիներ այդ կոչը մնաց անարձագանք և միայն 1864-ին դարձաւ կենդանի իրականութիւն։ 1864-ին նոյն Մարքսի ջանքերով հիմնուեց Լօնդօնում „Միջազգային Բանուորական Դաշնակցութիւնը“, որը հռչակեց բ ո լ ո ր ա զ գ ե ր ի եղբայրակցութիւնը յանձին աշխատաւոր մասսաների։

Նոր աւետարան էր այդ, տարբեր նախկիններից, այն էական յատկութեամբ՝ որ քարոզում էր իր հաւատացեալներին կազմակերպուել մ ի ջ ա զ գ ա յ ի ն հ ա մ ե ր ա շ խ ո ւ թ ե ա ն հողի վրայ և անդադրում պատերազմել. . Պատերազմել կապիտալիզմի ու շովինիզմի դէմ, աշխարհակալական տենչանքների, ժողովրդասպան պատերազմների դէմ։

Նոր աւետարանը տարածուեց արագութեամբ, գտաւ մեծ թւով համախոհներ բոլոր երկրներում։ Մ ի ջ ա զ գ ա յ ն ո ւ թ ե ա ն դաւանանքը շեշտուեց յարաճուն ուժգնութեամբ սոցիալիստական մամուլի մէջ, հրապարակական միտինգներում, ազգային ու միջազգային կոնգրէսներում։

* * *

Եւ ահա հարց. ո՞ւր էր մնում սոցիալիզմի այդ յաղթական առաջխաղացութեան դիմաց, ո՞ւր էր մնում միջազգայնութեան այդ որոտագոչ փառաբանումների միջոցին՝ ազգայնութեան հինաւուրց գաղափարը։ Արդեօք

հայրենասիրական խանդը մարեց նոր հոսանքի այնքների մէջ, հայրենիքի կուլտը վերացաւ...

— Անտարակոյս, բացականչում է ֆանատիկոս նոր-ակնուանքը, որ սոցիալիզմի այբուբէնն անգամ սովորելու ճիգ չէ արել:

Մենք կարծում ենք հակառակը: Եւ մեզ վկայ են այն յաճախակի և վճռական բողոքները, որ յայտնում են քաղաքակրթուած երկրների սոցիալիստները, ամեն անգամ, երբ բուրժուա-հակառակորդը շպրտում է նրանց երեսին „անհայրենիք", „հակազգային" մակդիրները:

Մենք կարծում ենք, որ սոցիալիզմի մէջ հայրենիքի գաղափարը զուտեց միայն, ստացաւ իր իսկական, վեհ կերպարանքը:

Անշուշտ, կան որոշ „ֆորմուլներ" (բանաձև), որոշ արտայայտութիւններ սոցիալիստական փիլիսոփայութեան մէջ, որոնք մոլորութեան պատճառ են լինում, որոնք ընթերցողին — մանաւանդ անպատրաստ, մակերեսային ընթերցողին — կարծել են տալիս, թէ սոցիալիզմը ժխտում է հայրենիքի գաղափարը, թէ նա թշնամի է ազգայնութեան:

Դեռ 1847 թուին, նոյն մեր յիշած Մանիֆէստի մէջ Կարլ Մարքս յայտարարում էր հանդիսաւոր կերպով, թէ „աշխատաւորները հայրենիք չունեն": Այդ խօսքը այնուհետև մտաւ, այսպէս ասած, շրջանառութեան մէջ, նրան աւելացան ուրիշ նոյնիմաստ խօսքեր ու դարձուածներ, ինչպէս օրինակ՝ ubi bene ibi patria — ուր շահ ունիմ, այնտեղ է իմ հայրենիքը — և այլն: Եւ նորահաւատները ամեն տեղ եռանդով կրկնեցին ու տարածեցին, առանց հետաքրքրուելու, թէ երբ և ինչ պայմաններում են գործածուել այդ խօսքերը սոցիալիզմի վարդապետների մօտ, առանց իմանալու, թէ որքան նրանք համապատասխան են իրականութեան, հասարակական-մասսային հոգեբանութեան... կեանքի

գաղանիքները առհասարակ շատ աւելի բարդ են, քան պարզ, սիմպլիստ „բանաձևերը":

Կան ֆորմուլներ, որոնք ունեն միայն ժամանակաւոր գոյութեան իրաւունք: Որքէ մեծ տաղանդ, հասարակական որքէ մեծ շարժման մի նախաձեռնող հրապարակ է նետում նրանց, շարժման սկզբնաւորութեան մէջ, — և ծայրայեղ, էնտրանզիժան ձևով, — այն գիտակցութեամբ՝ որ այդ տարամերժ ֆորմուլները, թէպէտ և չունին մնայուն արժէք, բայց հէնց շնորհիւ իրենց սուր արտայայտութեան, մեծապէս օգնում են ագիտացիային — մտքերի յուզման — իրենց նորութեամբ զարնում են մարդկանց ջղերին, ընորոշում են նոր սկսուած շարժումը և հաղորդում նրան ցանկալի թռիչքը: Սակայն յետագայում, երբ բացայայտւում է նրանց ներքին տկարութիւնը, նրանք այլևս չեն յուզում մարդկանց, այլ յաճախ պատճառում են հիասթափութիւն միայն:

Այդ բնոյթն ունին Մարքսի և Էնգելսի բերանով հռչակուած մի քանի ֆորմուլներ:

Սոցիալիստական միտքը 1847-ին, նոյնիսկ յանձին իր ամենափայլուն ներկայացուցիչների, դեռ ևս անորոշ էր, տարտամ, խարխափուն: Միևնոյն ժամանակ նա նեղ էր, էնտրանզիժան (անհաշտ, չիրաւախոհ):

Նեղ էր դասակարգի հասկացողութիւնը, նեղ էր և պրօլետարիատի պատմական կոչման ըմբռնումը: Սոցիալիզմի հիմնադիրներին թուում էր, թէ աշխատաւոր դասակարգը լիակատար ինքնաճանաչութեան հասնելու համար՝ պէտք էր խորտակէր բոլոր աւանդական կապերը, որոնք շղթայում են նրան ազգային կեանքի հետ: Նրանց թուում էր, թէ կապիտալիզմը ճակատագրական ձգտումն ունի՝ միշտ աւելի և աւելի ստորացնելու բանւոր դասակարգը, խլելու նրանից գոյութեան բոլոր երաշխիքները, նրան դուրս շպրտելու նոյնիսկ հայրենիքի, ազգութեան սահմաններից:

„Աշխատաւորները հայրենիք չունեն“ հռչակաւոր ֆրազը, ուզում է հէնց ասել, որ այդ աշխատաւորները ստոր են դրուած հայրենիքից, քանի որ նրանք և՛ կողոպտուած են և՛ անարգուած և՛ բռնաբարուած իրենց ամենասուրբ իրաւունքների մէջ։

Բայց այդ ֆորմուլի մէջ եղած անպատեհութիւնը չէր կարող խուսափել Մարքսի և Էնգելսի սուր դիտողութիւնից։ Ազգայինների մէջ է, որ պրոլետարիատը պիտի մղէր իր դասակարգային կռիւը։ Ազգայնորէն է, որ նա պիտի կազմակերպէր կոմունիստական (համայնական) աշխատանքն ու արդիւնագործութիւնը։ Եւ ահա միևնոյն „Մանիֆէստի“ մէջ մենք կարդում ենք.

„Պրոլետարիատի կռիւը բուրժուազիայի դէմ եթէ ոչ իր պարունակութեամբ, գոնէ իր ձևով պէտք է լինի նախ և առաջ ազգային կռիւ. պէտք է, բնականաբար, որ իւրաքանչիւր երկրի պրոլետարիատը նախ վերջացնէ իր հաշիւները իր սեփական բուրժուազիայի հետ“։

Ապա կարդում ենք և հետևեալը.

„Պրոլետարիատը նախ պիտի նուաճէ քաղաքական իշխանութիւն, բարձրանայ ազգային դասակարգի աստիճան, կազմակերպէ ինքն իրեն որպէս ազգ. այդ մտքով նա դեռ ազգային կերպարանք ունի, թէպէտ և ոչ բնաւ բուրժուազիայի իմաստով“։

Այդպիսով, թուում է թէ բանւոր դասակարգի զուտ ազգային գոյութիւնը, ըստ „Մանիֆէստի“, մի վայրկեան է միայն պատմութեան ընթացքում, — այն վայրկեանը, երբ այդ դասակարգը պիտի ձեռք բերէ քաղաքական իշխանութիւն իր հայրենիքում։ Այնուհետև նա յայտնւում է դուրս ազգայնութիւնից, այնուհետև նա դառնում է մի մասը տիեզերական-կոմունիստական հայրենիքի։

Մարքսեան դպրոցի շրջահայեաց մտքերը, նրանք՝ որոնք սովորել են քննադատաբար վերաբերուել ուսուցչի խօսքերին և ոչ թէ սերտել ու կրկնել ստրկօրէն, — մերժում

են այսօր „դիալէքտիկայի“ այդ խաղը, մետաֆիզիքական այդ ֆորմուլները։ Մետաֆիզիքական՝ այն պատճառով, որ չեն հիմնուած ստոյգ փորձի վրայ, իրական կեանքի ճիշտ ծանօթութեան վրայ։

Երբէք, տասնիններորդ դարի դասակարգային արիւնահեղ կռիւների միջոցին և ներկայ օրերում, երբէք չենք դիտում, որ եւրոպական այս կամ այն երկրի պրոլետարիատը, բուն աշխատաւոր ընդհանրութիւնը խզէր իր կապերը հայրենիքի, ազգայնութեան հետ. երբէք չենք տեսնում, որ նա ժխտէր այդ գաղափարների հետ անբաժան կապուած տենչանքները, աւանդութիւնները, յուշերն ու յոյսերը...

Ֆրանսիական պրոլետարիատը, որ ամենամեծ ճակատամարտներն է մղել նախորդ դարի ընթացքում, — 1830-ին, 1848-ին և 1871-ին — որոնցից երբեմն սասանուել է ամբողջ տիեզերքը, որոնք երբեմն ազդանշան են տուել և բռնկեցրել ապստամբութեան հրդեհը ուրիշ երկրներում, — ֆրանսիական պրոլետարիատը երբէք, մի վայրկեան անգամ չէ մոռացել ազգային պանծալի աւանդութիւնները, որոնք բղխում են 1789-ի դիւցազնական օրերից և որոնք ընդհանուր սեփականութիւն են ոչ միայն բանւորական այլև բուրժուազական — մանր ու խոշոր — դէմոկրատների։ Ֆրանսիական պրոլետարիատը, հրահանգուած իր այդ թովիչ աւանդութիւններից՝ կռուել է միշտ անսասան հաւատով դէպի քաղաքական — ոչ զուտ բանւորական — յեղափոխութեան ամենակարող ուժը, և նա կռուել է միշտ ներշնչուած այն հպարտ գիտակցութեամբ՝ որ ֆրանսիական հայրենիքը կոչուած է դեր խաղալ տիեզերական ազատագրութեան հոյակապ գործում...

Ահաւասիկ փաստեր — իսկ դրանք են իշխում, կարելի է ասել, տասնիններորդ դարի սոցիալական շարժման զարգացման վրայ — ահաւասիկ փաստեր, որոնք պերճախօս ժխտումն են բերում այն վերացական ֆոր-

մուլներին, թէ՝ „աշխատաւորները չունեն հայրենիք“, թէ՝ „ուր շահ ունիմ, այնտեղ է իմ հայրենիքը“։

Պրոլետարական կուիւը ոչ միայն իր ձևով, այլև իր էութեամբ, իր բովանդակ կերպարանքով ազգային դրօշմ է կրում բոլոր երկրներում — և ազգայնութիւնը ներկայ դէպքում հանդէս է գալիս իր լաւագոյն իմաստով, կատարեալ ներդաշնակութեան մէջ՝ մի ազգայնութեան գաղափարի հետ։

Միւս կողմից — հարկ կայ արդեօք շեշտել — գալոց համաշխարհային կոմունիզմն էլ չէ պատկերանում առողջ դատողութեանը, իբրև մի վեթխարի, տիեզերական կենտրօնացումն, այլ իբրև դաշնակցութիւն ազատ ու ինքնակայ համայնքների-հայրենիքների...

V

ԴԷՊԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մարքս եւ Էնգելս շտկում են 1848 թւի վրիպումները. — Ազգային խնդրի հզօր ծաւալումը. — Սօցիալիզմը՝ միշտ աւելի եւ աւելի ռէալիստական։

Կարլ Մարքսի երկու ըստ երևոյթին հակասական ֆօրմուլները — „Աշխատաւորները հայրենիք չունեն“ և „Պրոլետարիատը պիտի կազմակերպւի իբրև ազգ“ — կարող են հաշտուել մէկ պայմանով միայն՝ որ սօցիալական յեղափոխութիւնը կատարւի արագութեամբ, որ մէկ թափով պրոլետարիատը գերիշխանութիւն ստանայ իր հայրենիքում և փոխարինէ բուրժուա-ազգութիւնը՝ պրոլետար-ազգութեամբ։ Այլապէս երկու ֆօրմուլների հաշտութիւնը անհնարին է։ Եթէ պրոլետարիատի յաղթանակը պիտի ձեռք բերւի ոչ թէ յանկարծական մի յեղաշրջումով, այլ միայն մաս-մաս, աստիճան-աստիճան, ապա ուրեմն մենք պիտի ունենանք հասարակական էվոլիւցիայի մէջ մի երկարատև շրջան, ուր պրոլետարիատը թէպէտև տակաւին չպիտի նոյնանայ ազգութեան հետ, այնուամենայնիւ նա պիտի պահպանէ և ուժեղացնէ նրան — իր ազգութիւնը — պիտի ձգտէ զարգացնել նրա արդիւնաբերութիւնը, պիտի ապահովէ նրա անկախութիւնը — թէկուզ հէնց միլիտարիզմի և ուրիշ չարիքների գնով — պիտի ապահովէ ընդդէմ արտաքին թշնամիների, ընդդէմ հնարաւոր յարձակումների...

Այդ երկարատև շրջանում, ուրեմն, աշխատաւորները,

պրոլետարիատը պիտի կանգնած լինեն զուտ ազգայնական հողի վրայ, պիտի պաշտպանեն ոչ միայն իրենց, այլև հակառակորդ դասակարգի շահերը, ընդհանուր ազգի, հայրենիքի շահը։

Մարքսեան ֆորմուլների ճշտութիւնը, ուրեմն, կախուած է նրանից, թէ ինչպէս պիտի վրայ հասնի սոցիալիզմի լիակատար յաղթանակը, թէ մօտաւորապէս ի՞նչ եղանակով պիտի կատարւի բուրժուազական կարգերի տապալումը... Մի հարց, որ այլևս պարապ, կաբինետային հարց չէ այսօր, այլ առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի խնդիր, որ զբաղեցնում է սոցիալիզմի թէօրետիկոսներին և որ այնքան մեծ դեր խաղաց ուղղափառ և կրիտիկոս մարքսիստների միջև բորբոքուած հակառակութեան ու սուր պայքարի մէջ։

Սոցիալիստական աշխարհում երբեմն տիրում էր այն համոզումը՝ որ սոցիալիզմի յաղթանակը մօտ է, որ աշխատաւոր մասսաները փութով ու դիւրութեամբ կը գրկեն նոր աւետարանը, քանի որ այնքա՞ն նա հրապուրիչ էր, այնքան պարզ ու հասկանալի էին նրա հրահանգները...

Այդ թիւրիմացութիւնը, որ տակաւին չէ բարձած սոցիալիստական շրջանակներից, գալիս է հէնց Մարքս-Էնգելսեան Մանիֆէստից։ Երկու ռազմիկները, տարուած ծայրայեղ լաւատեսութեամբ, յեղափոխական յափշտակութեան մէջ՝ մարգարէանում էին, որ բուրժուազական յեղափոխութեանը Գերմանիայում շուտընդփոյթ կը հետևէր սոցիալական յեղափոխութիւնը, բուրժուազիայի վերջնական տապալումը...

Անցաւ այն օրերից աւելի քան կէս դար, — բուրժուազական հասարակութիւնը ոչ միայն կանգուն մնաց, այլև, դժբախտաբար, ցոյց տուեց այնպիսի կենսունակութիւն, որ „Մանիֆէստի“ հեղինակներից մինը, Ֆրիդրիխ Էնգելս, ստիպւած եղաւ իր մահից քիչ առաջ

հրապարակ հանել հետևեալ պարզ ու նշանակալից խոստովանութիւնը.

„Պատմութիւնը չարդարացրեց մեզ և բոլոր ուրիշներին, որոնք մեզ պէս մտածելով, 1848 թուին հաւատում էին պրոլետարիատի յաղթանակին շատ մօտ ապագայում։ Նա պարզ ցոյց տուեց, որ տնտեսական զարգացման վիճակը եւրոպական ցամաքի վրայ այն ժամանակներում դեռ բնաւ այնքան հասունացած չէր, որ կարելի լիներ սնչնչացնել կապիտալիստական արդիւնագործութիւնը։ Նա ապացուցեց այդ՝ տնտեսական այն յեղափոխութեամբ, որը 1848-ից սկսած զրաւեց ամբողջ ցամաքը և իրօք մտցրեց խոշոր ինդուստրիան Ֆրանսիայում, Աւստրիայում, Ունգարիայում, Լեհաստանում, իսկ վերջերս նաև Ռուսաստանում, այն ինչ Գերմանիայից ստեղծեց առաջին կարգի արդիւնաբերական երկիր, — ամեն տեղ տնտեսական յեղափոխութիւն կապիտալիստական խարխսի վրայ... Եթէ պրոլետարիատի այսօրուան հզօր բանակն անդամ դեռ ևս չէ հասած իր նպատակին, եթէ նա՝ հեռու մի հարւածով յաղթանակը վաստակելուց՝ պիտի առաջնայ դանդաղօրէն, դիրքից դիրք անցնելով, յամառ ու դժնդակ պայքարի մէջ, — դա հաստատապէս ապացուցանում է, որ անհնարին էր 1848-ին առաջ բերել սոցիալական յեղաշրջումը լոկ անակընկալ մի յարձակումով... Այդպիսի անակընկալ հարւածների ժամանակն անցել է։ Այնտեղ, ուր հասարակական կազմակերպութեան լիակատար կերպարանափոխման հարց է դրւած, այնտեղ իրենք մասսաները պէտք է մասնակցեն, պէտք է հասկանան, թէ ինչի համար են կռիւ մղում իրենք։ Բայց որպէս զի մասսաները հասկանան իրենց անելիքը, անհրաժեշտ է երկարատև, անդուլ աշխատանք“։

Դա Մարքսիզմի վերջին խօսքն է, նրա ամփոփումը։ Մարքսիզմը դրանով շակեց իր խոշոր վրիպումներից մինը, և „կատաստրոֆային թէօրիայի“ հետ ինքն ըստ ինքեան յաղթահարեցին նաև ֆորմուլները՝ հայրենիքի ու ազգայնութեան մասին։

* * *

Սկզբում տարտամ, անորոշ ու անստոյգ՝ մարքսիստական վարդապետութեան հիմնական գաղափարները, շը-

նորհիւ քննադատող մտքի առաջադիմութեան, յետագայում սրբագրուեցին, և ինքը վարդապետութիւնը միշտ աւելի և աւելի դարձաւ ռէալիստական, միշտ աւելի և աւելի համապատասխան իրականութեան։

Այո՛, յոյսերը չափազանց վարդագոյն էին 1848-ին և մարգարէութիւնները՝ չափազանց յախուռն ու հապճեպ։ Մարքսեան Մանիֆէստը խօսում էր միայն դասակարգային կռիւների մասին, այնինչ գրեթէ միայն ազգայնական կռիւներն էին, որ այնուհետև լցրին համաշխարհային պատմութիւնը։ Մարքս և Էնգելս առհասարակ շատ էին ցած գնահատում ազգայնական գործօնի դերը պատմութեան մէջ... Գրչի մի հարուածով նրանք չէզոքացնում էին ազգերի դարաւոր ներհակութիւնը։ „Ժողովուրդների ազգային բաժանումներն ու հակառակութիւնները — ասում են նրանք Մանիֆէստի մէջ — միշտ աւելի և աւելի կորչում են արդէն, շնորհիւ բուրժուազիայի զարգացման, առևտրի ազատութեան, համաշխարհային վաճառականոցին, շնորհիւ ինդուստրիական արդիւնագործութեան միակերպութեան և նրան համապատասխանող կենսական պայմաններին“...

Որքա՞ն այդ բոլորը հեռու է իրականութիւնից... Մանիֆէստի հեղինակները չէին կարող նախատեսել ազգային խնդրի անսովոր ծաւալումը և նրա հզօր արտայայտութիւնները.... 1848-ից յետոյ, ժողովրդային այնքա՞ն բազմաթիւ և համատարած ցնցումների մէջ գերիշխող փաստը՝ պրոլետարական, կոմունիստական գործողութիւնը չէր, այլ ստրկացած ու պառակտուած ազգերի — Իտալիայի, Ունգարիայի, Լեհաստանի, Գերմանիայի — հսկայական ճիգը՝ թօթափել օտարի կամ հարազատ բռնաւորի լուծը և կազմակերպուել իբրև ինքնուրոյն, ազգայնական ռամկավար մարմիններ։

Պատմական հրահանգիչ փորձութիւնները համոզեցին Մարքսին, որ նրա սկզբնական գուշակութիւնները

պրոլետարիատի արագ ու յաղթական առաջխաղացութեան մասին՝ անհիմն էին, որ նրա հասկացողութիւնը ազգային մեծ խնդրի կատարելիք դերի մասին մութ ու տարտամ էր, նրա ֆորմուլները՝ խախուտ, վերացական։

1851-ին և 52-ին գրած „Յեղափոխութիւնը և հակայեղափոխութիւնը“ վերնագրով իր աշխատութեան մէջ՝ Կարլ Մարքս այլևս սոսկ „դասակարգային կռիւ“, բանւոր դասակարգի անջատ գործողութեան և „պրոլետարիատի մօտալուտ յաղթանակի“ ջատագովը չէ, ոչ էլ մարգարէն. նա ցաւ է յայտնում, որ Ֆրանկֆուրտի հռչակաւոր պարլամենտը չկարողացաւ ստեղծել գերմանական ազգի միութիւնն ու ուժը...

„Քանի դեռ հողը էր մաքրւած բանւորների անկախ գործողութեան համար, քանի դեռ հաստատուած չէր ընդհանուր և ուղղակի ընտրողական իրաւունքը, քանի դեռ երեսունուվեց մեծ ու փոքր պետութիւններ շարունակում էին կարատել Գերմանիան անթիւ մանրիկների, — ի՞նչ կարող էր անել պրոլետարական կուսակցութիւնը“... և այլն։

Հետևելով նոյն տրամաբանութեան, Մարքս և Էնգելս մի քանի տարի յետոյ, ջերմ պաշտպան կանգնեցին Իտալիայի ազգային միացման։

Այսօր, աւելի քան յիսուն տարի է անցել, արևմտեան Եւրոպայում կազմակերպւել են արդէն անկախ ազգութիւններ, ռամկավարական կարգերով, — բայց մենք տակաւին հեռու ենք այն վիճակից, երբ պրոլետարիատը կարող է մղել՝ Մարքսի արտայայտութեամբ՝ „իր սեփական կռիւը“...

Յիսունական թուականներից յետոյ Մանիֆէստի ֆորմուլները ազգայնութեան ու հայրենիքի մասին արձագանք չգտան սոցիալիստական աշխարհում։ Մարքս և Էնգելս ինչպէս և նրանց հեղինակաւոր աշակերտները, կամ խպառ հրաժարուեցին նրանցից, կամ թէ թողին ազգերի ձուլման կնճռոտ խնդիրը գալոց դա-

ըերին։ Պատճառը ... ինքը արիւնոտ իրականութիւնն էր, ուր ճնշած, կոխկռտուած ազգութիւնները, որպէս հսկայական մի մարտադաշտում, մոլեգնութեամբ գրոհ էին տալիս իրենց դարաւոր հարստահարիչների դէմ, տենչալով ազատ, ինքնուրոյն գոյութեան։ Ունգարիան, Իտալիան ապստամբել էին Աւստրիայի դէմ և արիւնոտւում էին հերոսական ճակատամարտերում։ Լեհաստանը, պատմութեան այդ խորթ, թշւառ զաւակը, գալարւում էր ցարի ոտքերի տակ և դիւցազնական թռիչքներ էր գործում՝ իր ազատութիւնը վերստանալու համար։ Ապա Արևելքի մանր ազգերը՝ Բուլգարիան, Կրետէն, Մակեդոնիան, Հայաստանը՝ իրենց պարբերական երերումներով... Ամենքն էլ ազգային դրոշակն էին պարզում, ամենքն էլ ձգտում էին պատուաւոր դիրք բռնել արեգակի տակ։

Հրահանգիչ էր այդ իրականութիւնը... և սոցիալիզմի թէօրետիկոսները ստիպած եղան ազգայնութեան ըմբռնումի մէջ՝ „ստամոքսային“ պատճառներից դուրս հաշուի առնել նաև ուրիշ մոմէնտներ, հոգեբանական կարգի պատճառներ։

Հեռու ազգայնութեան վրայ խաչ դնելու մտքից՝ նրանք ընդհակառակը, իրենց մանիֆէստների, հրապարակական ճառերի ու յօդուածների մէջ ամէն մի առթիւ խնամքով շեշտեցին, որ միջազգայնութեան գաղափարը, ինտերնացիօնալիզմը, միանգամայն հաշուում է ազգայնութեան գաղափարի ու հայրենասիրութեան հետ։ Ոմանք ուղղակի և բացարձակապէս հռչակեցին հայրենիքի անհրաժեշտութիւնը, նրա օգտակարութիւնը քաղաքակրթութեան նորմալ, բնականոն զարգացման համար։

VI

ՓԱՍՏԵՐ

„Ինտերնացիօնալը“ եւ ազգային հարցը. — Հեղինակաւոր սոցիալիստների կարծիքները նոյն հարցի մասին. — Սոցիալիզմը ազնուացնում է հայրենիքի գաղափարը։

Խօսենք փաստերով։

Ինտերնացիօնալիզմի առաջին գործնական արտայայտութիւնը մենք տեսնում ենք 1864-ին, Մարքսի ջանքերով հիմնուած „Ինտերնացիօնալի“, կամ Միջազգային Բանուորական Դաշնակցութեան մէջ։

Ուշադրաւ հանգամանք. այդ նոյն բազմատարը, գերազանցապէս միջազգային Դաշնակցութեան հետ, նրա ծագման մէջ, նրա որբանում, մենք տեսնում ենք շեշտած ազգային խնդիրը, տեսնում ենք նրա հզօր փաստաբանութիւնը։ Ռուսաց բռնակալութեան զոհ՝ լեհ ժողովրդի խնդիրն էր այդ։ 1863-ին, ռուսական Լեհաստանում ժայթքեց վերջին արիւնահեղ ապստամբութիւնը, որի անգութ, բարբարոսական ճնշումը յարուցեց լուսաւոր աշխարհում ցասման փոթորիկ։ Բանուոր ընդհանրութիւնը ալեկոծուեց, մանաւանդ Ֆրանսիայում ու Անգլիայում, և որոշեց կազմակերպել ռուս միապետութեան դէմ մի հուժկու բողոք „բոլոր երկրների պրոլետարների“ կողմից...

1863-ին և 64-ին Լոնդոնում գումարուած մեծ միտինգներում, զանազան երկրների բանուորական պատգամաւորները ոչ միայն իրենց բողոքը հնչեցրին ռուսաց բռնութիւնների դէմ, այլև ներբողեցին լեհական

հայրենասիրութիւնը, ջերմ, ոգեորուած պաշտպան կանգնեցին լեհ ազգի անկախութեան։

Այդ համախմբումներով և սկիզբ առաւ աշխարհահռչակ Ինտերնացիոնալը. նրանցով և առաջին անգամ իրագործուեց գործնական կեանքում Մարքսի ռազմակոչը՝ „Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք“։

Ահա թէ ինչ էր գրում 1866 թ-ին, այդ Դաշնակցութեան գերմանական հատուածի կենտրոնական օրգան՝ Ժընէվի „Der Vorbote“ լրագիրը.

„Իւրաքանչիւր մի ազգ պէտք է ամենից առաջ իր ազգային պարտաւորութիւնները կատարէ, այսինքն ձգտէ քաղաքական ազատութեան ներսում և ազգային անկախութեան՝ դրսում“։

Նոյն թերթի մէջ՝ 1868 թ.

„Միջազգային բանւորական ձգտումն է՝ նպաստել ամեն տեղ ազատ և ամբողջական ազգային զարգացման։ Ամենափոքրիկ ազգութեանն անգամ պէտք է միշտ ապահովի ազատ ու անկախ գոյութիւն“։ „Իւրաքանչիւր մի ազգ, իբրև օրգանական մի անդամ մարդկային գերդաստանի մեծ շղթայի՝ իր տեմպերամենտի, ընդունակութիւնների համեմատ պիտի մատակարարէ իր բաժին-աշխատանքը ընդհանուր քաղաքակրթական գործի համար“։

Այդպիսով „Ինտերնացիոնալի“ մտածողների համար՝ ազգային պարտաւորութիւնների կատարումը հանդիսանում էր որպէս անհրաժեշտ մի նախապայման ազգերի եղբայրացման։ Եւ թէօրիական այդ դաւանանքին համապատասխանում էր գործնական կեանքում պատշաճ տաքտիկ։

Այն յիշատակելի օրերից իվեր Մարքս և Էնգելս, ինչպէս և սոցիալիզմի ուրիշ ներկայացուցիչներ, ամեն առթիւ ցոյց տուին լեհ հայրենասէրներին իրենց համակրանքն ու անվերապահ պաշտպանութիւնը։

Անտարակոյս, այդ պաշտպանութեան մէջ մեծ դեր էր խաղում մի կարևոր հանգամանք՝ այն՝ որ արևմտեան

սոցիալիստների աչքում բռնապետական Ռուսաստանի կանգուն մնալը մի ահաւոր վտանգ էր միջազգային ռամկավարութեան համար, յեղափոխութեան յաղթանակի և քաղաքակրթութեան առաջադիմութեան համար։ Եւ, հետևաբար, այդ վտանգի դէմ մաքառողները, լեհասանցիք, բնական դաշնակիցներ էին արևմտեան ռամկավարականների ու սոցիալիստների, — դաշնակիցներ, որոնց պէտք էր աջակցել, խրախուսել։

Ահա թէ ինչ էր գրում ուղղափառ մարքսիստ՝ Կարլ Կաուցկի Neue Zeit-ի էջերում (1895/6 թ. հատ. II), ի պատասխան այն փոքրաթիւ սոցիալ-դէմոկրատների — Ռոզա Լիւքսեմբուրգի և ընկերութեան — որոնք մի ծանծաղ կոսմոպոլիտիզմով տարուած, թոյլ են տալիս իրենց՝ բացասական, երբեմն նոյնիսկ հեգնական դիրք բռնել լեհ սոցիալիստների հայրենասիրական և ազգային անկախութեան ձգտումների նկատմամբ, և որոնք քարոզում են լեհերին՝ հրաժարուել ազգային անկախութիւնից, որը „անիրագործելի է ներկայ բուրժուազական կարգերի մէջ“ հրաժարուել առհասարակ „ազգայնական ցնորքներից“, ձուլուել ռուսների հետ և ձգտել ընդհանուր հայրենիքի, Ռուսաստանի բարեկարգման. — Կարլ Կաուցկի պատասխանում էր սոցիալ-դէմոկրատների այդ խմբին.

„Վերցնենք մի այլ պահանջ, որը, ի հարկէ, չէ ձևակերպուած գերմանական սոցիալ-դէմոկրատիայի ծրագրի մէջ, բայց որը իբրև պօստուլատ, իբրև իդէալ, ապրում է իւրաքանչիւր սոցիալ-դէմոկրատի սրտում — հանրապետութիւնը։ Գերմանական հանրապետութիւնը մի մաղաչափ անգամ աւելի մօտիկ չէ, աւելի իրագործելի չէ, քան ազատ Լեհաստանը։ Բայց այդ պատճառով՝ օր. Լիւքսեմբուրգ չի յանդիմանի գերմանական սոցիալ-դէմոկրատներին, որ նրանք հանրապետականներ են։ Ի՞նչ որ իրաւացի ենք գտնում գերմանացիների համար, նոյնը պիտի գտնենք իրաւացի և լեհերի նկատմամբ։ Արդ, եթէ լեհերը հանրապետական են, ի՞նչ իդէալ կարող են ունենալ նրանք։ Կարելի՞ է արդեօք ասել, որ նրանք ուզենան լինել

քաղաքացիներ՝ գերմանական, աւստրիական կամ ռուսական մի հանրապետութեան։ Եթէ նրանք ուզում են հանրապետութիւն, ապա կարող են մէկը միայն ուզենալ — Լեհաստան։ Եթէ օր. Լիւքսեմբուրգ կ՝ուզէ արգելել լեհ սոցիալ-դէմոկրատներին՝ առաջադրելու անկախ Լեհաստանի պօստուլատը այն պատճառով՝ որ նա ներկայումս անիրագործելի է, ապա նա նոյնպէս պիտի արգելէ նրանց՝ հանրապետական լինել“։

Նոյն յօդուածի մէջ Մարքսիզմի տաղանդաւոր թէօրետիկոսը առաջ է բերում է մի շարք ծանրակշիռ նկատումներ, որոնցով բողոքում է Լեհաստանի մի բուռն հակազգայի[1]) սոցիալ-դէմոկրատների դէմ, որոնք նրա — Կաուցկու — կարծիքով՝ կարող են միայն „Լեհաստանի հարստահարիչների շահերը հոգալ“ (die Geschäfte der Unterdrücker Polens besorgen)։ „Ազգային անկախութիւնը — շարունակում է Կաուցկի — այն հողն է, որի վրայ միայն պրոլետարիատը կարող է հասնել իր ուժերի լիակատար փթթման“...

Դիմենք ուրիշ սոցիալիստ հեղինակութիւնների։ Սրանից ընդամենը վեց տարի առաջ, Համբուրգի ազգային սոցիալիստական կօնգրէսում, ծերունի Լիբկնեխտ, որոտընդոստ ծափահարութիւնների մէջ յայտարարում էր.

„Մենք ոչ մի տարակոյս չպիտի թողնենք մեր լեհ ընկերների մէջ, որ լեհական ձգտումները դէպի անկախութիւն՝ մենք համարում ենք նոյնքան իրաւացի, որքան ամեն մի ուրիշ ժողովրդի անկախութեան ձգտումները“։

Եւ Բեբէլ գերմանական սոցիալիստ կուսակցութեան առաջնորդը, յայտնեց այդ կէտում իր համաձայնութիւնը Լիբկնեխտի հետ։

---

1) Ինքը Կաուցկին է այդպէս որակում։ Հարկաւոր է յիշել որ Լեհաստանի երեք հատուածների մէջ տիրապետող սոցիալիստական կուսակցութիւնը կանգնած է զուտ ազգային հողի վրայ, ինչպէս այդ կը տեսնենք հետեւեալ գլխում։

Պարտաւոր ենք սեպում յիշեցնել որ այդ հանդիսաւոր յայտարարութիւնները, տարաբախտաբար, չեն բաժանւում գերմանական բոլոր սոցիալիստներից, և այդ պատճառով դեռ մինչև օրս էլ լեհ ու գերմանացի սոցիալիստների միջև նկատելի են ցաւալի տարաձայնութիւններ, որոնք երբեմնապէս յանգում են նոյնիսկ ընդհարումների։ Այդ մասին կը խօսենք հետևեալ գլխում։

Այժմ շարունակենք բերել կարծիքներ։

Ազգայնութեան խնդիրը սոցիալիստական տեսակէտով լուսաբանելու համար՝ մենք օրինակ բերինք սոցիալիստների վերաբերումը դէպի ճնշուած ազգերից ամենաուժեղը, — Լեհաստանը։ Այժմ տեսնենք նոյն սոցիալիստների վերաբերումը դէպի մի հեռաւոր, ասիական, ճնշուած ու փոքրիկ ազգութիւն — դէպի Հայութիւնը։ Բաւականանանք միայն մէկ ձայնով, որ պէտք է համարել ամենահեղինակաւորը։

Նոյն Կարլ Կաուցկին, որի անունով երգւում է ամբողջ միջազգային Սոցիալ-Դէմոկրատիան, 1902 թ. մարտի 4-ին Եւրոպայի Հայ Ուսան. Միութեան Լիազօր Կոմիտէին ուղղած իր մի յօդուած-նամակի մէջ[1]), գրում է ի միջի այլոց հետևեալը.

„Ես բոլոր սրտով Հայոց դատի համակրող ու պաշտպան եմ, և Հայոց դատ ասելով՝ ես հասկանում եմ ոչ միայն լոկ նրանց պաշտպանութիւնը թիւրքական ու քրդական կոտորածների դէմ, այլև վերականգնումը նրանց ազգային անկախութեան“։

Ցաւանի է, որպիսի ջերմ համակրութեամբ են վերաբերում Հայ ազգային-քաղաքական դատին՝ Եւրոպայի գրեթէ բոլոր սոցիալիստ հեղինակութիւնները, որոնք միւսուղիչ համերաշխութեամբ՝ ձգտում են վերականգ-

---

1) Այդ նամակը ամբողջութեամբ պիտի լոյս տեսնէ Եւր. Հայ Ուս. Միութեան հրատարակելիք մեծ ժողովածուի մէջ։

նել, կաղգուրել ջարդ ու փշուր Հայութիւնը և մղել նրան դէպի խաղաղ շինարար պրոգրէսի ճանապարհը: Մեր ականջներին հնչում է շարունակ նրանց նուիրական կոչը, որ շրջան արեց քաղաքակրթուած երկրագնդի վրայ և որ արտայայտուում է երկու քաղցր, հմայիչ բառերով՝ „Pro Armenia“!...

Դիմենք ֆրանսիական սոցիալիստներին: Տեսնենք, ինչ են ասում տիեզերական աղատագրութեան առաջապահ երկրում, ուր փթթուել ու ծաղկել է գործնական սոցիալիզմը, ուր տակաւին 1789-ի յիշատակելի օրերում՝ դանտոնները ու Ռոբեսպիէռները մի սրտագրաւ համադրութեան մէջ՝ հաշտեցնում էին միջազգայնութեան, մարդկայնութեան գաղափարները ամենախանդավառ հայրենասիրութեան հետ: Պրոլետարական շարժումների այդ կլասիկ երկիրը միշտ ըմբոստ է եղել „ֆօրմուլների“ և քարացած դոգմերի դիմաց...

Ամենից առաջ յիշենք կարծիքը երկու նշանաւոր մարդկանց, որոնք ներկայացնում են սոցիալիզմի երկու հոսանքներ: Խօսքս Ժօռէսի և Գէդի մասին է: Նրանք երկուսն էլ զանազան ժամանակ և ամբողջ երկրի առաջ, պարլամենտական բեմից, արտայայտել են իրենց կարծիքները ազգայնութեան և հայրենիքի մասին:

„Սպասելով միջազգային այդ խաղաղութեան իրագործմանը սոցիալիստական միութեամբ՝ սոցիալիստները բոլոր երկրներում պարտաւոր են պաշտպանել իւրաքանչիւրը իր հայրենիքը ամեն հնարաւոր յարձակումների դէմ...“

Այսպէս էր խօսում 1895 թուի ապրիլի 7-ին ֆրանսիական պարլամենտում Ժան Ժօռէս, որ իր անունի պերճախօսութեան հետ միացնում է մեծ, զգայուն մի սիրտ և խոր ու ընդգրկող միտք:

Ժիւլ Գէդ, Ժօռէսի ախոյեանը, յայտնի է իբրև Մարքսի մոլեռանդ երկրպագու: Բայց մեզ զբաղեցնող խնդրի մէջ նա միանգամայն համաձայն է Ժօռէսի հետ: Ահա մի կտոր՝ նոյն պարլամենտում արտասանած՝ Գէդի մի ճառից (1897 թ. 20 փետրուար).

„Ինչպէս որ գաւառների անհետացումը չկատարուեց ընդդէմ գաւառների 1789-ին, երբ ծնունդ էր առնում ազգային շէնքը, այդ առաջին էտապը դէպի մարդկային միութիւնը, այնպէս և վաղուն յեղաշրջումը չպիտի կատարի այսօրուան ազգութիւնների դէմ, այլ նրանց օգտին և նրանց բարձրագոյն զարգացման համար“:

Նոյն ոգով է ներշնչուած և Գէդի ծնունդ „Բանուոր Կուսակցութեան Ազգային Խորհրդի“ մէկ մանիֆէստը, ուղղած „Ֆրանսիայի աշխատաւորներին“: Նա յայտարարում է, որ միջազգայնութեան գաղափարը ոչ նըւաստացնում և ոչ էլ զոհում է հայրենիքը. նա շեշտում է, որ „միջազգային ուղիի վրայ ոտք դնելով, մարդիկ չեն դադարում հայրենասէր լինել“:

Մի ուրիշ սոցիալիստ-թէօրետիկոս, Գաբրիէլ Դըվելը իր մի գրուածքի մէջ — „Սոցիալիզմ, Ցեղափոխութիւն և Միջազգայնութիւն“ վերնագրով — հետևեալն է ասում.

„Ինչպէս որ ընտանեկան համերաշխութեան զգացումին, առանց նրան աղճատելու, միացաւ ազգային համերաշխութեան զգացումը, նոյնպէս և այդ վերջինին միանում է՝ նրան պահպանելով միջազգային համերաշխութեան համեմատաբար նոր զգացումը:

... Լինելով միջազգայնիկ՝ (ինտերնացիոնալիստ) աշխատանքի ընկերների մէջ, երբ աշխատանքի շահերն են վտանգուած խաղաղութեան ժամանակ, մենք ամենից առաջ հայրենասէր և ֆրանսիացի ենք, երբ Ֆրանսիան, մեր հայրենիքը, յայտնուի պատերազմի վտանգի մէջ“...

Յիշենք, իբրև լրացումն, նաև մի անկախ ֆրանսիական սոցիալիստի կարծիքը.

Ահա թէ ինչ է ասում La Revue-ի ներկայ տարեայ No 3-ում Ի Ս Ր Բ Է Ն Գ Ո Հ Ի Է, Ֆրանսիայի ամենատաղանդաւոր հրապարակախօսներից մինը, որ իր մոլեգին գրչով խարազանում է բուրժուազական բոլոր կարգերը, — հասնելով յաճախ ամենածայրայեղ անիշխանականութեան.

„Ես միջազգայնացած եմ (internationalisé). բայց դա չէ նշանակում, թէ ես ազգայնացած եմ: Ես ինտերնացիոնալիստ եմ խելքով, և ֆրանսիացի եմ սրտով, մեր ցեղի պակասութիւններով ու արժանաւորութիւններով... Ես ուզում եմ բացարձակ արդարութիւն բոլոր մարդկանց համար և, եթէ նրա իրագործումը կախուած լիներ ինձնից, ես այն կ'իրագործէի նախ և առաջ մեզ մօտ:

Իմ համաքաղաքացիներից հոչակուած իբրև „անհայրենիք" ես քարոզել եմ Ամերիկայի Միացեալ Նահանգների ամբողջ տարածութեան վրայ ֆրանսիական հանճարի մեծութիւնը":

Դուք տեսնում էք, ընթերցող, որ մենք շատ հեռու ենք այն դրութիւնից, երբ սոցիալիզմի թէօրետիկոսները կարող էին թեթև սրտով հրաժարիմք ասել "ազգայնական նախապաշարումներին", երբ նրանք կարող էին բացականչել. „Աշխատաւորները հայրենիք չունեն"...

Տեղն է յիշատակել նոյնանման մի ուրիշ ֆօրմուլ, որ ասում է՝ „Հարստահարիչները հայրենիք չունեն" (Les exploiteurs n'ont pas de patrie!) — որ ֆրանսիացի անիշխանական Հ ա մ օ ն կարծես կամեցել է զուգադրել առաջինին... Երկու ֆօրմուլներն էլ մեղանչում են ճշմարտութեան դէմ:

Բայց շարունակենք.

Իտալիայի սոցիալիստ կուսակցութեան պարագլուխ՝ գիտնական-հրապարակախօս Է Ն Ր Ի Կ օ Ֆ Ե Ր Ր Ի, գրում է La Revue-ի միևնոյն համարում, ուր զետեղուած են

հեղինակաւոր մարդկանց կարծիքները հայրենասիրութեան և մարդասիրութեան մասին.

„Իմ ընտանիքից յետոյ՝ ես սիրում եմ իմ ծննդավայր գիւղը, որ յիշեցնում է իմ մանկութեան սիրուն ու երջանիկ տարիները...

„Իմ գիւղից յետոյ՝ սիրում եմ իմ Մանտու գաւառը և Լոմբարդիայի իմ շրջանը, որ ես աւելի քան Իտալիայի մի ուրիշ անկիւն՝ գտնում եմ ներդաշնակ իմ ճաշակի, իմ մտածելու, գործելու, ապրելու եղանակի հետ:

„Բայց ես շատ սիրում եմ նմանապէս իմ մեծ հայրենիքը, Իտալիան: Եւ այն բոլոր զրկանքներն ու փոթորիկները, որ ես կրում եմ զուարթ սրտով, պատճառաբանւում են հայրենիքի այդ սիրով. որովհետև ես կ'ուզէի տեսնել իմ հայրենակիցներիս աւելի բախտաւոր և նոյնպէս մեծ, ինչպէս մեծ էին մեր պապերը Հռովմէական Հանրապետութեան կամ Վերածնութեան շրջանում:

„Եւ այս բոլորը չէ արգելում ինձ՝ լինել մոլեռանդ ու ռադիկալ սոցիալիստ, լինել տենչացող մարդկութեան բարօրութեան...

„Մտածել, ուրեմն, թէ մարդկութեան սէրը նշանակում է հայրենասիրութեան մահ կամ փճացում,— ասել է չհասկանալ, որ մարդկային սրտում տեղ կայ բոլոր աստիճան (այլասէր) զգացումների համար, որոնք տարածւում են, լճի ալիքների նման, մեր անձնաւորութիւնից դէպի մեր ընտանիքը, դէպի մեր քաղաքը, դէպի մեր ազգը, վերջապէս՝ դէպի մարդկութիւնը":

Դարձեալ նոյն հանդէսի նոյն համարի մէջ՝ բելգիական սոցիալիստ կուսակցութեան պարագլուխ Է մ ի լ Վ ա ն դ ե ր վ ե լ դ, գրում է ի միջի այլոց հետևեալը.

„Այն ժամանակ միայն (պրօլետարիատի յաղթանակից յետոյ) հայրենիքի գաղափարը, այլևս չի լինի հակասող ամենայայն ինտերնացիոնալիզմի... Ջանգան երկրների քաղաքացիները որոշ չափով հաւատարիմ կը մնան այն աւանդութիւններին, որոնք կապում են նրանց այժմեան ազգութիւնների հետ: Բայց այդ դերադասումները կը կորցնեն բոլորովին յարձակողական բնոյթը և ոչինչ ուրիշ հետևանք չեն ունենայ՝ բայց եթէ միայն պահպանել ներդաշնակ

մի այլազանութիւն՝ միջազգային համերգի մէջ“։

Աւստրիայի պարլամենտական գործիչ՝ սոցիալիստ Պերներստորֆեր, 1897-ին Վիեննայում գումարուած աւստրիական սոցիալիստական համաժողովի մէջ միևնոյն միտքը յայտնեց հետևեալ խօսքերով, որոնք արժանացան բուռն ծափահարութեան.

„Սրանից 12 տարի առաջ Սոցիալ-Դէմոկրատիան տոգորուած էր անմիս ու անարիւն ինտերնացիոնալիզմով,—այսօր նա կանգնած է բոլորովին ռէալական ինտերնացիոնալիզմի հողի վրայ... Ազգերը պիտի նմանեն ծաղկաւէտ մի պարտիզի, ուր երփներանգ ծաղիկները աչքախացնում են մեր աչքը... յոյս ունեմ, որ ամեն տեղ պիտի յաղթանակէ այն համոզումը՝ որ կարելի է լինել ազնիւ գերմանացի, շիտակ իտալացի, լաւ սլաւոն, լինելով հանդերձ միջազգային խանդավառ սոցիալ-դէմոկրատ“։

Դիմենք այժմ մեր հարևան ռուսներին։ Հետաքրքիր է, ի հարկէ, լսել ամենահեղինակաւոր ռուս սոցիալիստի Լավրովի կարծիքը, որը իր ինքնուրոյն փիլիսոփայական մտածողութեամբ պատկառելի տեղ է գրաւել միջազգային սոցիալիստական աշխարհում և իր հայրենիքում ևս միանգամայն յարգուած է բոլոր ֆրակցիաներից։

„Ազգայնութիւն և Սոցիալիզմ“ խորագրով իր դասախօսութիւնը, կարդացուած Պարիզում 1883-ի հոկտ. 16-ին, Պեսոր Լավրով եզրափակում է հետևեալ խօսքերով.

„Վերջացնում եմ մի դիտողութեամբ, որը ամփոփում է ազգայնութեան և սոցիալիզմի փոխադարձ յարաբերութեան խնդրի էութիւնը։ Համոզուած սոցիալիստը իրօք ամենամոլեռանդ հայրենասէրն է. նա ձգտում է, որքան կարելի է, լաւ եղանակով մտցնել իր ազգի անդամներին սոցիալիստական մտքերի աշխատանքի մէջ“...

Այդ հիմնական գաղափարը Լավրով հանգամանօրէն արծարծում է նաև իր համբաւաւոր „Պատմական նամակներ“-ում, որոնք լոյս են տեսել 1871-ին, Միրտով անուան տակ։ „Ամենամոլեռանդ հայրենասէր“ բառերը Լավրով, ի հարկէ գործ է ածում ոչ գռեհիկ շովինիզմի մտքով։ Դրան ապացոյց այն տողերը „Պատմական նամակներ“-ից, որոնցով մեծանուն սոցիալիստ-յեղափոխականը նշաւակում է ազգայնական ատելութեան ներկայացուցիչներին, որոնք իրենց ազգը բարձրացնել են ուզում, ուրիշներին ոտնահարելով։

„Այդ տեսակ հայրենասէրները, ասում է Լավրով, սրբապղծում են ազգայնութեան գրօշը և գիտակցաբար կամ անգիտակցաբար ձգտում են ստորացնել իրենց հարազատ ժողովրդին, սրդելելով նրան՝ մտնել առաջադիմական գործօնների շարքը“ (Պատմական նամակներ, երես 179)։

Դատապարտելով այդ վնասակար ազգամոլութիւնը, Լավրով ոչ պակաս ուժով արշաւում է—յիշատակուած դասախօսութեան մէջ—նաև հակառակ ծայրայեղութեան դէմ, կոսմոպոլիտիզմի դէմ։

„Կոսմոպոլիտ կարող էր լինել Էգոիստ, եսամոլ, որը ջնջելով անհատի ու մարդկութեան միջև գոյութիւն ունեցող բոլորը՝ կապերը և ունենալով շատ քիչ հնարաւորութիւն՝ նուիրուելու ընդհանուր մարդկային խնդիրների, նա, կոսմոպոլիտը իր համար իրաւունք էր մշակում՝ չհետաքրքրուելու ոչ մի բանով, որ կարող էր պահանջել մարդկանցից իրական զոհեր“...

* * *

Հարկ կայ արդեօք աւելի երկար ծանրանալու այս խնդրի վրայ... Ազգայնութիւնը և սոցիալիզմը ոչ միայն իրար չեն բացասում, հայրենիքը և մարդկայնութիւնը ոչ միայն հակառակորդներ չեն, այլ միանգամայն ներդաշնակ գաղափարներ, մի տեսակ փոխադարձ լրացուցիչներ։ Ազգային զգացումը, հայրենիքի գաղափարը սոցիալիստական վարդապետութեան մէջ սրբագործուում են, ընդունում են վսեմ ու ջնջ կերպարանք... Ոչ մար-

դատեաց, վեստակար շովինիզմ, ոչ էլ ծոյլ, դատարկ կոսմոպոլիտիզմ, այլ անաղարտ հայրենասիրութիւն՝ միացած ինտերնացիոնալիզմի կամ միջազգայնութեան գաղափարի հետ — ահա ժամանակակից ճշմարիտ ինտելիգենտ մարդու դաւանանքը։

Արժէ փոքր ինչ աւելի կանգ առնել ազգայնական հրատապ խնդրի վրայ, որը տիրապետող գծերից մէկն է ժամանակակից քաղաքակրթութեան, և, անտարակոյս, վաղուան Ռուսաստանում ևս, այդ հսկայածաւալ ու բազմատարր կայսրութեան մէջ, որի հետ կապուած է մեր ճակատագիրը, — նա պիտի հանդիսանայ առաջնակարգ հարց, թերևս ուժգին հակամարտութեան ու ընդհարումների աղբիւր գործօն . . .

Գէթ տեսնենք — խոշոր, ընդհանուր գծերով — ինչպէս են լուծում Եւրոպայի մէջ ճնշուած ազգերի կենցաղավարութեան հարցը, ինչ է, այսպէս ասած, սոցիոլոգիայի վերջին խօսքը նրա վերաբերմամբ և ինչպէս են նայում այդ խնդրի վրայ մասնաւորապէս Ռուսաստանի յեղափոխականները, սոցիալիստները։

VII

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

—

Դերիշխանութեան ծգտումները եւ ճնշուած ազգերը — Աւստրիական քաօսը . — Լեհ ազգայնութիւնը Գերմանիայում. — Vae Victis! Փեդերալիզմը՝ որպէս միակ քանաւոր լուծում. — Աւստրիական Սօցիալ-Դէմօկրատիան եւ Փեդերալիզմի սկզբունքը . — Գերմանական Սօցիալ-Դէմօկրատիան եւ լեհական անկախութիւնը . — Ազգային ինքնավարութեան հարցը Ռուսաստանում. — „Նարօդնայա Վօլիա“ . — Սօցիալ-Դէմօկրատ եւ Սօցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւններ։

Ազգայնութեան սկզբունքը, բարձրաձայն հռչակուած Մեծ Յեղափոխութեան միջոցին, նեիրագործուած ամբողջ յետագայ պատմութեամբ՝ այսօր տակաւին հեռու է յաղթանակից։ Այդպէս է նոյնիսկ քաղաքակրթուած, սահմանադրական Արևմուտքում։

Դեռ բազմաթիւ են պատմական փոքրիկ ազգութիւնները, որոնք՝ ենթարկուած բաղդի բերմունքով այս կամ այն մեծ ցեղին, այս կամ այն պետութեան՝ ողբում են իրենց իրաւազուրկ վիճակը, ճչում են շարունակ, եռում կատաղութեամբ և ցասումով գրոհ են տալիս իշխող ցեղերի դէմ. . .

Քաղաքական կուսակցութիւնները իրարու են անցնում, վառուած փոխադարձ ատելութեամբ. պարլամենտների և լանդտագների կամարները թնդում են օբստրուկցիայի վայրենի աղաղակներից, կեանքը թունաւորում է, առաջադիմութեան գործը կանգ է առնում և մինիստրութիւնները յաջորդում են իրար՝ մինը միւսից անճարակ, անզօր գտնելու մի իրական դարման տիրող չարիքներին։

Որպիսի՜ ահաւոր փոթորիկներ են ծագում միմիայն լեզուի խնդրից—իւրաքանչիւր մի ազգ լինելով հզօրապէս նախանձախնդիր իր մայրենի լեզուին, նրա պահպանման ու բարգաւաճման. . .

Ուժեղները բանեցնել են ուզում յաղթողի իրաւունքը և Vae victis!-ի (վա՛յ յաղթուածին) ցաւագին կոչը դեռ տարածւում է լուսաւոր աշխարհի վրայ. . .

Աւստրիան կլասիկ երկիրն է ազգայնական այդ փոթորկալի պայքարների: Առնւազը ութ տարբեր ազգութիւններ—գերմանացիք, չեխեր, լեհեր, ռուսիններ, ռումէններ, իտալացիք, սլովէններ, խորվատներ—ապրում են այդ դժբախտ հողի վրայ և չկան երկու հարևաններ, որ ապրեն խաղաղութեամբ: Գերմանացիք բռնուած են չեխերի, սլովէնների և իտալացիների հետ: Լեհերը և չեխերը փոխադարձաբար գրգռում են Սիլեզիայում: Ռուսինները ատամներ են կրճտացնում լեհերի դէմ՝ Գալիցիայում և ռումէնների դէմ՝ Բուկովինայում. սլովէնները կռւում են խորվատների ու իտալացիների դէմ և այդպէս անվերջ և բոլորն էլ ժամանակ առ ժամանակ գրոհ են տալիս հրէաների դէմ. . .

Եւ ստեղծւում է այդ կենտրոնախոյս ուժերի գործակցութիւնից մի այլանդակ քաոս, որ առիթ է տալիս ամենամռայլ գուշակութիւնների. . .

Այդ դեռ միայն Աւստրիան. իսկ նրա կողքին կայ տասնուեօթ միլիոն բնակչութիւն ունեցող Ունգարիան, որը մշտական պայքարի մէջ է Աւստրիայի հետ, բայց որը ինքն էլ ներկայացնում է սահմանադրական մի բրոնապետութիւն, ուր 40% մաջառները—7 միլիոն ընդդէմ 10-ի — ձգտում են խեղդել, ապազգայնացնել 60% այլազգիներին՝ ռումէններին, խորվատներին և այլն:

Իշխող տարրը, որ գրեթէ ամէն տեղ նոյն դաւանանքն ունի՝ Աւստրիայում, թէ Ունգարիայում, Գերմանիայում, թէ Ռուսաստանում, Տաճկաստանում և այլն — բռնութեամբ հարթել է ուզում ազգայնական տարբերութիւնները և ամբողջ երկիրը ուզում է դարձնել միապաղաղ մի ամբողջութիւն, մարդ-անհատների մի սոսկ շեղջակոյտ (agregat): Նրա համար ազգերի խնդիրը ամենաշատը՝ հանդիսանում է իբրև լեզուների ու պաշտօնների խնդիր:

Դա ատոմիստական-կենտրոնական ըմբռնումն է քաղաքական գիտութեան մէջ, որին հակադրւում է հաւաքական-պակենտրոնական թէօրիան:

Այդ վերջինի համեմատ՝ այլևայլ ազգութիւններից բաղկացած պետութիւնը լոկ անհատների մի հաւաքածու չէ, այլ մի ամբողջութիւն, կազմւած ինքնուրոյն ազգային միութիւններից:

Ազգային խնդիրը այդ վերջին ըմբռնումով՝ լեզուների ու պաշտօնների խնդիր չէ միայն, այլ շատ աւելի ծանրակշիռ մի հարց, որ վերաբերում է պետական բովանդակ կազմակերպութեան, — մի քաղաքական-սահմանադրական հարց:

Ազգերը կայսրութեան սահմանների մէջ պիտի ձեռք բերեն իրաւական անհատականութիւն. նրանք պիտի կազմեն օրգանական ամբողջութիւններ, օժտւած պետական ֆունկցիաներով: Այն ժամանակ միայն նրանք տէր կը լինեն իրենց ճակատագրին և այն ժամանակ միայն՝ թէ կը պահպանւի կայսրութեան ամբողջութիւնը և թէ կ'ապահովւի նրա բնականոն ու անարգել առաջադիմութիւնը:

Այս է ապակենտրոնական կամ ֆէդերալիստական թէօրիայի իմաստը: Միանգամայն անհրաժեշտ ու բանաւոր մի լուծում՝ որ տրամաբանօրէն հետևում է ամբողջ նախորդ դարի պատմութիւնից:

Այնուամենայնիւ, դեռ ըստ երևոյթին շատ մելան կը թափւի, շատ տարիներ կ'անցնեն կռւով ու փոթորիկ-

ներով, մինչև որ իշխող տարրերը կըգան այդ բաղձալի եզրակացութեան։

Առ այժմ ապակենտրոնական թէորիայի միակ ներկայացուցիչն է, Աւստրիայի մէջ, սոցիալիստ կուսակցութիւնը, որը պահանջում է անկախ ազգերի միդաշնակցութիւն՝ հիմնուած լեզուական սահմանների վրայ։ Այդ կուսակցութիւնը գործնականապէս կիրառել է արդէն դաշնակցութեան սկզբունքը, նա մտցրել է իր կազմակերպութեան մէջ—1897-ից սկսած—ազգայնական ամենալայն ապակենտրոնացում։ Նա միացնում է գերմանացիներին, չեխերին, լեհերին, իտալացիներին և հարաւային սլավոններին։ Ամէն մէկը այդ կազմակերպութիւններից ինքնավար է (autonome) իր ազգային գործունէութեան սահմաններում, բայց և բոլորն էլ կապուած են դաշնակցական ամենասերտ կապով, միացած են ընդհանուր սոցիալիստական ծրագրով, յաճախ նոյնիսկ ընդհանուր տաքտիկով—երբ հարկաւոր է մասային ցոյցերով պահանջել ութժամեայ աշխատանքի օր, ընդհանուր ընտրողական իրաւունք, խօսքի, մամուլի ազատութիւն և այլն։ Եւ այդպէս՝ թև թևի տուած, իբրև մէկ բանակ, գաղափարի ու գործի մի հզօր միութիւն՝ նրանք ձգտում են տապալել ընդհանուր թշնամուն,—միապետութիւնն ու կապիտալիզմը և վերաշինել Աւստրիան սոցիալիզմի ու ազգերի եղբայրացման խարիսխների վրայ։

Սոցիալիստ կուսակցութիւնները Աւստրիայի մէջ տալիս են իրօք համերաշխութեան մի յուզիչ օրինակ ամբողջ աշխարհին։ Չնայած որ նրանք համեմատաբար դեռ շատ երիտասարդ են արևմտեան սոցիալիստական կուսակցութիւնների շարքում, բայց որոշ խնդիրներում ցոյց են տալիս աւելի մեծ հասունութիւն ու հեռատեսութիւն։ Նրանք մշակել են լաւագոյն „ազգայնական ծրագիրը“։ Նրանք լաւ գիտեն, որ կեանքը չէ վերածւում սոսկ դասակարգային ընդհարումների. չոր, շաբլօնական „ֆորմուլների“ մարդիկ չեն նրանք, այլ կենդանի իրականութեան։ Նրանք ամենօրեայ փորձերից գիտեն, թէ որքան մեծ է ազգայնական գործօնի դերը նոյնիսկ դասակարգային անտագոնիզմի բորբոքման շրջանում։ Նրանք լաւ են ըմբռնել, որ սոցիալիզմի յաղթութեան միջոցը՝ պրոլետարիատի դասակարգային կռիւը՝ կարող է հասնել իր կատարեալ զարգացման միմիայն ինքնավար ու խաղաղ հարևանութեամբ ապրող ազգերի մէջ։

Ազա՜տ պիտի լինի ժողովուրդը ամէն տեսակէտով, որպէս զի պրոլետարիատը կարողանայ իր բոլոր զէնքերով և բոլոր թափով դիմագրաւել իր հասարակական հակառակորդին։ „Ազգային անկախութիւնը նոյնքան անհրաժեշտ է պրոլետարիատի նօրմալ ու բազմակողմանի զարգացման համար, որքան ընդհանուր ընտրողական իրաւունքը, որքան մամուլի ու խօսքի ազատութիւնը“ (Կաուցկի)։

Եւ Աւստրիայի կուսակցութիւնները—գերմանացի, չեխ, լեհ, իտալացի և այլն—սոցիալիստական սկզբունքների հետ միասին՝ իրենց երկրներում եռանդով արծարծում են ճշմարիտ, մաքուր հայրենասիրութիւն։

* * *

Անցնենք Գերմանիա։ Այնտեղ մենք գտնում ենք աւելի անմխիթար մի կացութիւն։ Ահա ձեզ մի երկիր, առաջնակարգ, բարգաւաճ, որ ընդհանուր քաղաքական իրաւունքների տեսակէտից շատ աւելի բարձր է, քան Աւստրիան։ Տարբերութիւնը երկու երկրների միջև գրեթէ այնքան մեծ է, որքան Աւստրիայի և Ռուսաստանի միջև։

Երեսուն ու երեք տարուց ի վեր Բիսմարկի հայրենիքը վայելում է ընդհանուր ընտրողական իրաւունք, մամուլի, խօսքի ազատութիւն։ Երեսուն ու երեք տարուց ի վեր սոցիալիզմը այնպիսի հսկայական թռիչքներ է արել, որ սոցիալիստական կուսակցութիւնը, իր երեք միլիոն ընտրողներով և 80 պատգամաւորներով Ռայխստագի մէջ՝

համարում է ամենաուժեղ քաղաքական մարմինը իր հայրենիքում և սոցիալիստական շարժման առաջապահը ամբողջ աշխարհում։

Այդ. և սակայն այդ լուսաւոր, „կիսասոցիալիստական“ երկրի մէջ մենք ականատես ենք ազգայնական մի վայրենի քաղաքականութեան, որ երբեմն յարուցանում է զայրոյթ ու նողկանք արևմտեան աշխարհում։ Բիսմարկի ոգին դեռ սաւառնում է իր հայրենիքի վրայ՝ Ռայխստագի շէնքում, լանդտագների մէջ, ուսկից արձակւում են թոյլ ազգերի դէմ քստմնելի հրահանգներ...

Թող թոյլ տրւի մեզ՝ հակիրճ բնորոշել այդ քաղաքականութիւնը, „յօրինակ այլոց“։ Էլզաս-Լոտարինգիան մի կողմ թողնելով, կանգ առնենք միայն գերմանական Լեհաստանի վրայ։

Վրեշնի անցքերը դեռ ևս թարմ են բոլորի յիշողութեան մէջ։ Բարձր կառավարութեան, կայսրի ու կանցլերի հաւանութեամբ էր, որ սրանից ընդամենը երկու տարի առաջ գանակոծում էին լեհ դպրոցական մանուկներին, այն պատճառով միայն, որ նրանք ուզում էին իրենց մայրենի լեզուով խօսել, աղօթել...

Դէպքերը չափազանց ըմբոստեցուցիչ էին և այն օրերից ի վեր լեհական խնդիրը Գերմանիայի մէջ ստացել է անսովոր այժմէութիւն։ Թէ Ռայխստագում և թէ պրուսական լանդտագում՝ այդ խնդիրը ծեծւում է յաճախ. լեհ պատգամաւորները, երբեմն նաև գերմանացի սոցիալիստները, նշաւակում են բիսմարկեան ռէժիմը պօղնում ու վերին Սիլեզիայում։ Լինում են փոթորկոտ վիճաբանութիւններ։ Ազգային հալածանքի փաստաբանները հարկադրւում են խօսել։ Եւ ի՞նչ են ասում...

Նրանք ամեն անգամ շեշտում են հզօրի, յաղթողի իրաւունքը։ Ամիսներ առաջ, պրուսական ներքին գործերի մինիստր՝ կոմս Համմերշտայն՝ խօսելով լեհական

խնդրի մասին, ասում էր պարզապէս. „Մենք պէտք է հրամայենք և նրանք (լեհերը) պէտք է հնազանդւեն“։
Wir haben zu befehlen und sie haben zu gehorchen!

Ներկայ տարւայ ապրիլի 15-ին լեհ Մինիցկի արտասանեց Ռայխստագի մէջ մի յուզիչ ճառ՝ այդ նոյն մինիստրի և ամբողջ պրուսական քաղաքականութեան դէմ, որը „բռնի կերպով ձգտում է պրուսացնել լեհական նահանգները“։

„Մենք ոչ մի անջատական ձգտումն չունենք, յայտարարում էր լեհ պատգամաւորը, մենք միայն ուզում ենք օրինական միջոցներով պրօպագանդ անել՝ մեր մայրենի լեզուն պաշտպանելու համար“։

Այդ մեղմ, չափաւոր ճառին հետևեց սովորական կոշտ պատասխանը։ Կառավարութեան բերան՝ պետական քարտուղար Պոզադովսկի նոյնպէս պնդեց յաղթողի իրաւունքի վրայ. „Կռիւ է, ասում էր նա, և վերջնական յաղթանակը պիտի տանէ նա, ով ամենից աւելի խնայող ու խելօք է և ով ամենից աւելի ընդունակ է տնտեսապէս“։

Միևնոյն օրը, ապրիլի 15-ին, լեհական հարցը դրուած էր պրուսական լանդտագի մէջ։ Հերցոգ Տրախենբերգ — մի ուրիշ բիսմարկեան — զարգացնելով հակալեհական իր ծրագիրը, հետևեալն էր ասում, ի միջի այլոց. „Մեր լաւագոյն գործիքն է դպրոցը. նա պիտի տանէ գործը այնպիսի եղանակով, որ լեհ երեխաները աւելի դիւրութեամբ գերմաներէն խօսեն, քան լեհերէն“։

Որքա՞ն խրատական են այս փաստերը՝ սահմանադրական կարգերի ձգտող ճնշած ժողովուրդների համար...

„Մենք պէտք է հրամայենք — նրանք պէտք է հնազանդւեն“... Ո՞ւր չէ հնչում այդ ամբարտաւան ֆրազը... Բայց կրգայ ժամը, երբ գոռող յաղթողը հաշիւ կը ներկայացնէ իր արարքների մասին, կրգայ

ժամը — շատ հեռու չէ նա — երբ „յաղթեւածները“ կը շտկեն իրենց կորացած մէջքը և կը ծառանան իրենց դահիճների դէմ...

Պանգերմանիզմի վայրենի պրոպագանդը լեհական Պոզնանում հասցնում է միայն մէկ հետեւանքի, — նա բորբոքում է լեհերի ատելութիւնը դէպի իշխող տարրը և դրա հետ միասին արծարծում է նրանց մէջ հայրենասիրութեան կրակը։ Լեհ տարրը այսօր, աւելի քան երբ և իցէ, տոգորուած է անկախ հայրենիքի բուռն տենչանքով, և Պոզնանի ամբողջ տարածութեան վրայ՝ լեհ ինտելիգենտի առանձնասենեակի մէջ, թէ գեղջկական խաղաղ կացարաններում, ուժգին որոտում է վաղեմի ռազմերգը՝ „Դեռ կորած չէ Լեհաստանը“...

Սոցիալիստները բացառութիւն չեն կազմում ընդհանուր հայրենասիրական եռանդի մէջ. ընդհակառակը. նրանք այն աստիճան նախանձախնդիր են ազգային անկախութեան, որ ուզում են պահպանել իրենց ինքնուրոյնութիւնը նոյնիսկ կազմակերպական խնդիրների մէջ։

Լեհ սոցիալիստ կուսակցութիւնը մինչև օրս մնում է անկախ՝ գերմանական Սոցիալ-Դէմոկրատիայից։ Կազմակերպուած զուտ ազգային հողի վրայ, նա չէ ուզում մտնել այդ վերջինի մէջ, իբրև սոսկ հատուած, այլ ուզում է մտնել, իբրև ինքնավար մարմին։

Ա.ՅԴպիսի մի տաքտիկ լեհ սոցիալիստների աչքում ուրնի խոշոր կարևորութիւն, իբրև մի ցոյց պանգերմանիզմի, համագերմանական տիրապետութեան դէմ։ Պէտք է յիշել, որ լեհ սոցիալիստական շարժումը պրուսական Լեհաստանում ենթակայ է անհամեմատ աւելի խիստ հալածանքի կառավարութեան կողմից, քան բուն գերմանական սոցիալիստական շարժումը՝ միևնոյն վայրերում։

Կայ և մի ուրիշ պատճառ, որ միանգամայն արդարացնում է լեհական սոցիալիստ կազմակերպութեան անկախ գոյութիւնը։

Կայ մի հոսանք գերմանական Սոցիալ-Դէմոկրատիայի մէջ, որ բարեկամական աչքով չէ նայում լեհական անկախութեան ձգտումների վրայ և նոյնիսկ երբեմն դժգոհութիւն է յայտնում, որ լեհ սոցիալիստները մըղում են սոցիալիզմի պրոպագանդը իրենց մայրենի լեզուով։ Ահա մի դէպք, որ բացառիկ չէ, տարաբախտաբար.

Գերմանական Սոցիալ-Դէմոկրատիայի օրգաններից մինը՝ Դրէզդէնի բանւորական թերթը, 1897-ին խօսելով լեհական սոցիալիստական կոնգրէսի մասին, ասում էր ի միջի այլոց.

„Բերլինում չէկայ մի լեհ աշխատաւոր, որ չհասկանայ գերմաներէն լեզուն. ի՞նչ օգուտ կարող է ունենալ մի փոքրիկ լեհական թերթ, որը յամենայն դէպս ոչ մի կերպ չէ կարող մրցել գերմանական խոշոր սոցիալ-դէմոկրատական թերթերի հետ։ (տես *Beilage zur Sächsischen Arbeiter-Zeitung, 1897 No 131*)։

Դժւար չէ տեսնել, թէ ով է մեղանչում ներկայ դէպքում սոցիալիզմի սկզբունքի դէմ, — լեհ սոցիալիստները, թէ յիշեալ թերթի խմբագիրները։ Լեհաստանի ամենաառաջադէմ կուսակցութիւնը իրաւունք չունի հրապարակախօսել իր մայրենի լեզուով, տարածել սոցիալիզմը իր հայրենակիցների մէջ՝ որովհետև կան գերմաներէն խմացող լեհ աշխատաւորներ, — ահա թէ ուր է տանում հակազգայնական նեղսրտութիւնը...

Հակառակ ինտերնացիոնալի և ամենահեղինակաւոր սոցիալիստների տուած սանկցիային՝ դեռ էլի գտնւում են ֆանատիկոսներ, — նոյնիսկ սոցիալիստական շարքերում, — որոնք ուղղակի կամ անուղղակի բռնանում են փոքրիկ ազգերի իրաւունքների վրայ, նպաստաւորելով գերիշխող ցեղի ազդեցութիւնն ու տիրապետութիւնը։

Զարմանալի է այդ պարագաներում, որ լեհ ժողո-

վրդի ամենահզոր սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը ուզում է պահպանել անջատական, անկախ գոյութիւն։

„Լեհական պրոլետարիատը երբէք չըպիտի հրաժարուի ազատութեան ու անկախութեան ձգտումից“ — բացականչում էր այդ կուսակցութեան ամենատաղանդաւոր ներկայացուցիչ և աւստրիական պարլամենտի անդամ՝ Դ ա շ ի ն ս կ ի, 1902 թ. հոկտ. 19-ին, Բերլինում գումարուած լեհ-գերմանական սոցիալիստական խորհրդաժողովում։ Հակաճառութեան մի խօսք անդամ չըլսուեց գերմանացի սոցիալիստների կողմից, — հակաճառելը կը լինէր դաւաճանութիւն տասնեակ տարիների ընթացքում դաւանած սկզբունքին... Բայց շարունակենք։

Լեհ սոցիալիստական կուսակցութեան անկախ գոյութիւնը սկսւում է 1893 թուից։ Մինչ այն՝ նա կազմում էր ագիտացիական մի անշան մասին գերմանական Սոցիալ-Դեմոկրատիայի շրջանակներում։ Այնուհետև նա դարձաւ ինքնավար և զուտ ազգային մասին, պահպանելով հանդերձ — չնչին յաւելուածով — Էրֆուրտեան յայտնի ծրագիրը, որի հիմնական սկզբունքները պարտաւորեցուցիչ են բոլոր երկրների սոցիալիստների համար։ 1893-ից ի վեր նա ինքնագլուխ վարում է իր ներքին գործերը, համերաշխ ընթանալով գերմանական սոցիալիստների հետ այնպիսի հարցերում — ընտրողական պայքար և այլն — որոնք վերաբերում են ընդհանուր կայսրութեան։ Նա գումարում է յատուկ համաժողովներ, մղում է սոցիալիստական բուռն ագիտացիա իր հայրենակիցների մէջ, հրատարակում է „Gazeta Robotnizcka“ թերթը, որ պաշտօնական օրգանն է գերմանական կայսրութեան մէջ ապրող բոլոր լեհ սոցիալիստների։ Նա միաժամանակ պահպանում է ամենասերտ կապ ռուսական և աւստրիական Լեհաստանի

հետ։ Երբ մէկ մասում պակասում են ագիտացիական կամ նիւթական ուժերը, միւս մասից փոխադրւում են այնտեղ։ Եւ այդպիսով հրապարակ է գալիս երբեք մի ամբողջական սոցիալիստական կուսակցութիւն լեհական հայրենիքի երեք տարբեր հատուածների մէջ, և միջազգային սոցիալիստական կենդրէսներին Լեհաստանը ուղարկում է յատուկ ներկայացուցիչներ։

Թէ գերմանական, թէ աւստրիական և թէ ռուսական Լեհաստանի մէջ՝ ազգային խնդրի վերաբերմամբ տիրում է մաքերի կատարեալ ներդաշնակութիւն. — ամեն տեղ սոցիալիստները ձգտում են ա ն կ ա խ լ ե հ ա կ ա ն հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ ե ա ն։

Լեհ սոցիալիստ կուսակցութիւնը գերմանական Լեհաստանում՝ կատարում է մի ծանրակշիռ և գերազանցապէս կուլտուրական դեր։ Նա ոչ միայն կազմակերպում է լեհ պրոլետարիատի տնտեսական ու քաղաքական կռիւը, այլև պաշտպանում է նրա ազգային-քաղաքակրթական շահերը բառիս ամենալայն նշանակութեամբ։ Նա ջերմապէս հայրենասէր է, բայց նրա ըմբռնումը հայրենասիրութեան մասին լինելով համաձայն մ ի ջ ա զ գ ա յ ն ո ւ թ ե ա ն առողջ դաւանանքին՝ արգելք չի լինում նրան՝ մաքառելու բոլոր ուժերով լեհ բուրժուական կուսակցութիւնների — դրամատէրների ու կղերականների դէմ — որոնք նոյնպէս շարունակաբար կոչ են անում հայրենասիրութեան՝ իրենց կուսակցական շահերը առաջ տանելու համար։

1893 թւականից ի վեր երկու սոցիալիստ կուսակցութիւնները՝ գերմանականը և լեհականը՝ խուլ ու անընդհատ մաքառման մէջ են... Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան մերթ ճանաչել է անկախ լեհական մասնի գոյութիւնը, մերթ բացասական դիրք է բռնել դէպի նա, և բանակցութիւնների մէջ մտնելով՝ ձգտել է ձուլել։ Ցարաբերութիւնները ժամանակի ընթացքում այն աս-

տիճան լաբուեցին, որ 1902-ի պարլամենտական ընտրութիւնների միջոցին՝ լեհ և գերմանացի սոցիալիստները ներկայացրին առանձին-առանձին թեկնածուներ (սովորաբար երկու կողմերը համաձայնութեան էին գալիս թեկնածուների վերաբերմամբ)։

Ընդհանուր ժողովներն ու երկար-բարակ բանակցութիւնները չըյանգեցին դրական հետևանքի[1]. գերմանական Սոցիալ-Դեմոկրատիայի վարիչ շրջանը միշտ աւելի և աւելի թշնամական դիրք բռնեց դէպի Լեհաստանի անկախութեան ծրագիրը՝ հակառակ իր նախորդ ծանուցումներին ու սոցիալիստ աստղերի յայտնած կարծիքներին, հակառակ նոյնիսկ 1896-ի Լոնդոնի Միջազգային Սոցիալիստական կոնգրէսի հանդիսաւոր որոշման, թէ՝ „Բոլոր ազգերը ունեն կատարեալ իրաւունք կազմակերպելու, ինչպէս կամենում են“։

Խօսքը և գործը, այո, շատ յաճախ չեն ներդաշնակուում նոյնիսկ ամենառաջադէմ կուսակցութեան մէջ, որը գրել է իր դրօշակի վրայ՝ հաւասարողութիւն և բացարձակ արդարութիւն։ Դարձեալ, ուրեմն, մի տխուր հանգամանք, որ խրատական է այն բոլոր փոքրիկ ազգութիւնների համար, որոնք՝ կաշկանդուած մի հզօր ցեղի գերիշխանութեան տակ՝ ձգտում են դէպի մի լաւագոյն ապագայ...

* * *

Ազգային ինքնավարութեան կնճռոտ խնդիրը դրուում է նաև ժամանակակից Ռուսաստանում։ Աւելորդ է, թերևս, շեշտել այստեղ, թէ որքան ուժեղ են գերիշխանութեան հակումները կատաղի ու Սուվորինների հայրենիքում և թէ որքան անտարբեր է նոյնիսկ ռուս ազատամիտ ընդհանրութիւնը դէպի այն բազմաթիւ ժողովուրդների ճակատագիրը, որոնք ապրում են կայսրութեան սահմաններում, ճնշուած իբրև քաղաքացի և իբրև ազգ։

Ազատ լինելով ցեղական ոչէ ատելութիւնից, շեշտելով հանդերձ մեր ջերմ համակրանքը դէպի ռուս ժողովուրդը, մենք չպէտք է թագցնենք որոշ անվիճելի ճշմարտութիւններ։

Արիւնոտ փաստեր կան արձանագրուած պատմութեան էջերում։ Եթէ մենք մոռանանք՝ Լեհը չի մոռանայ... Նա, որ Ռուսաստանի բոլոր ազգերի մէջ ամենից աւելի է ճաշակել հալածանքի թոյնը. այդ մեծ նահատակը՝ որ 1830-ից սկսած՝ հնչեցրել է շարունակ իր ցնցող ձայնը կախաղանների վրայից և Սիբիրի տունդրաներից...

Լեհը չի մոռանայ։ Նա գիտէ, որ իր կրած աղետների մէջ միապետական կառավարութիւնը չէ միակ պատասխանատուն. գիտէ, որ լեհական սարսափները կատարուել են ռուս հասարակութեան հաւանութեամբ...

Երևանական թաւականներին, երբ Լեհաստանը՝ ջարդուած, արիւնլայ՝ համակուել էր անհնարին սգով, երբ ռուս զինուորի բիրտ բազուկներով „կարգը վերահաստատուել էր Վարշաւայի մէջ“ — Պուշկինն էր հրապարակ գալիս, Ռուսաստանի մեծ ու „ազատամիտ“ բանաստեղծը, որ նոյնիսկ թխած ունի մի շարք անցէնզուր ոտանաւորներ—Պուշկին գալիս էր ոչ թէ բողոքելու կատարուած անիրաւութիւնների դէմ, ոչ թէ նշաւակելու բռնապետական գազանութիւնները և այդպիսով գէթ մասամբ հանգստացնելու Ռուսականութեան խիղճը,— ոչ, նա գալիս էր իր ահեղագոչ մուսայով հեգնելու և անարգելու արիւնաթաթախ զոհերին...

Ո՞վ է մոռացել „Բօրոդինոյի տարեդարձը“, ուր փառաբանուում են ռուսաց զօրքի յաղթանակները „ըմբոստ Վարշաւայում“. կամ „Ռուսաստանի գրպարտիչներին“ շանթարձակ ոտանաւորը, ուր բանաս-

1) Այդ բանակցութիւնների մանրամասն ու փաստական պատմութիւնը արուած է մի փոքրիկ բրոշիւրի մէջ. «Offener Brief der Polnischen Sozialistischen Partei an die deutche Sozialdemokratie».

տեղը որոտում է ի պատասխան Եւրոպային, որը բողքում էր ռուս զօրքերի վայրագութիւնների դէմ. „Թողէք, որ մենք ինքներս վճռենք մեր մէջ հին ընտանեկան վէճը. հարցը նրանում է արդեօք սլաւոնական առուն՞ը պիտի թափուին ռուսաց ծովի մէջ, թէ՞ ռուսաց ծովը պիտի հորանայ“...

Բանաստեղծական այդ յոխորտանքին պատասխանեց յետագայում Միցկեվիչ, տանջող Լեհաստանի այդ հարազատ և սքանչելի զաւակը, որ այնքան բուռն կերպով զգաց հայրենիքի տառապանքները և այնքան յափշտակութեամբ նրա ազատութեան իդէալը երգեց։

„Իմ ռուս բարեկամներին“ խորագրով՝ ցնցող բանաստեղծութեան մէջ՝ Միցկեվիչ ուրուագծում էր ապագայ լեհ-ռուսական համերաշխութիւնը, որը հնարաւոր է, նրա կարծիքով, միմիայն ազատ Ռուսաստանի և անկախ Լեհաստանի միջև. ապա մի սրտառուչ ներբող էր կարդում ռուս աքսորական դեկաբրիստներին, որոնք նիւթել են իրենց հռչակաւոր դաւադրութիւնը միապետութեան դէմ (1825 թ-ին) լեհերի հետ միասին։ Լեհ բանաստեղծը ուղղում է նրանց զգացուած խօսքեր, մխիթարում ու քաջալերում է նրանց։ Ահա վերջաբանը.

„Մի բաժակ թոյն պիտի թափեմ այժմ։ Խօսքերիս դառնութիւնը դերբուկ է, լափող այդ դառնութիւնը գալիս է իմ հայրենիքի արիւնից ու արցունքներից։ Թող նա կրծոտէ և լափէ ոչ թէ Ձեզ, այլ Ձեր շղթաները“...

Թշուառ, վտարանդի ազգային բանաստեղծը չտեսաւ իր տենչերի իրականացումը։ Բայց նա տեսաւ ռուս-լեհական համաձայնութեան առաջին քայլերը — մի փոքրիկ, համեստ սկզբնաւորութիւն։ Ռուս հասարակութեան անդգայութիւնը յաւիտենական չէր։ Կամաց-

կամաց երևան եկան սրտի տէր մարդիկ, տոգորուած բարձր գաղափարներով։

Վաթսունական թուականներին նրանց թիւը աճեց և նրանք խմբուեցին հռչակաւոր Հերցենի շուրջը։ Լինելով խանդավառ հայրենասէրներ՝ Ալեքսանդր Հերցեն իր ընկերներով, միևնոյն ժամանակ ջերմ պաշտպան էին լեհական անկախութեան։ Եւ ահագնցիկ „Կոլոկոլի“ մէջ նա սկսեց քարոզել իր անկարեկիր հայրենակիցներին՝ ի նըպաստ անկախ Լեհաստանի։

Անցան տարիներ։ Յեղափոխական-ազատագրական շարժումը հող բռնեց նաև բուն Ռուսաստանում։ Հանդէս եկաւ աշխարհահռչակ „Նարոդնայա Վոլիա“-ն իր քաջարի սպայակոյտով։ Նա ևս քարոզեց լեհ-ռուսական եղբայրակցութիւն և մինչև անգամ կռուի դաշն կապեց լեհ-սոցիալիստական „Պրոլետարիատ“ կազմակերպութեան հետ (1884 թ)՝ ընդհանուր ուժերով տապալելու համար բռնապետական ռէժիմը։ Լեհաստանի անկախութիւնը երկուստեք ընդունուեց, իբրև անհրաժեշտ պայման, conditio sine qua non։

Ահա այդ առթիւ „Նարոդնայա Վոլիա“-ի նշանաւոր ազգը.

„Յարգող ամեն մի ազգի անկախութեան ու ազատ զարգացման՝ „Նարոդնայա Վոլիա“ կուսակցութեան Գործադիր Յանձնաժողովը չէ կարող չընդունել նաև, որ ռուս և լեհ ազգերի սոցիալական պայմանների տարբերութիւնները չեն թոյլ տալիս գործածել նոյնանման միջոցներ՝ ռուս ու լեհ սոցիալիստների նախապատրաստական աշխատանքների մէջ։ Հետևաբար, „Նարոդնայա Վոլիա“ և լեհական „Պրոլետարիատ“ կուսակցութիւնների միջև՝ կատարեալ ձուլումը կարող էր աւելի շուտ խոչընդոտ լինել լեհ և ռուս սոցիալիստների գործունէութեան համար, խանդարելով երկու կողմերի ազատութիւնը՝ կազմակերպութեան ու պայքարի լաւագոյն միջոցների ընտրութեան մէջ։ Այս սկզբունքի զօրութեամբ՝ ռուս Գործադիր Կոմիտէն, միանալով լեհ Կենտրոնական Կոմիտէի հետ՝ ընդունում է, սակայն, իբրև միանգամայն իրաւացի՝

այս վերջինի որոշումը՝ վերաբերեալ „Պրոլետարիատի“ անկախութեանը և սեփական պատասխանատուութեանը՝ Լեհաստանի բոլոր գործերը վարելու խնդրում։ Գործադիր Կոմիտէն չէր էլ կարող իր վրայ առնել գործերը վարելու պատասխանատուութիւնը մի երկրում, որը այնքան տարբերւում է Ռուսաստանից, ինչպէս և նա չէր ուզի իր սեփական գործերը դնել որևէ ոչ-ռուս կուսակցութեան ազդեցութեան ներքոյ։ Բայց սերտ կապը „Նարոդնայա Վոլիա“ և „Պրոլետարիատ“ կուսակցութիւնների միջև նոյնքան անհրաժեշտ է, որքան և նրանց կատարեալ անկախութիւնը։

„Մեր ընդհանուր թշնամուն, ռուս կառավարութիւնը տապալելու խնդրի մէջ՝ ռուս և լեհ սոցիալիստների կուիւը ոչնչով չէ կարող տարբերուել։ Այդտեղ բարոյական միութիւնը ռուս և լեհ սոցիալիստների միջև կարող է և պէտք է դառնայ ճշմարիտ ու կատարեալ։ Ընդհանուր թշնամուն մենք պիտի ընդդիմադրենք մեր միացած ուժերը։ Այդ տեսակէտից ռուս Գործադիր Կոմիտէի կարծիքները բոլորովին համաձայն են լեհական կենտրոնական Կոմիտէի կարծիքների հետ։ Տապալել ռուս կառավարութիւնը՝ — դա, բնականաբար, ամենից առաջ ռուս յեղափոխականների պարտաւորութիւնն է, որոնց հետ լեհական յեղափոխական ուժերը, այդ մասնաւոր նպատակի համար, միանում են, իբրև դաշնակից և օժանդակ մարմին։ Այսպէս են մեր դաշնակցութեան բնական պայմանները, որոնց համեմատ մշակւել է համաձայնութիւն լեհ և ռուս կազմակերպութիւնների միջև։ Հաստատելով այդ համաձայնութիւնը, Գործադիր Կոմիտէն յոյս է տածում, որ իրականութիւնը ցոյց կըտայ շուտով այդպիսի մի միութեան առաւելութիւնները՝ թէ մեզ և թէ մեր լեհ ընկերների համար“։

„Նարոդնայա Վոլիա“ կուսակցութեան Գործադիր Կոմիտէ.
Պետերբուրգ, 1 մարտի 1884 թ.

Պատկերը մեծապէս փոխւել է այն օրից։ Տնտեսական կեանքը յեղաշրջւել է, մտքերը առաջադիմել են՝ թէ բուն Ռուսաստանի և թէ նեաճւած երկրների մէջ։ Սոցիալիզմի և Յեղափոխութեան դրօշակի տակ համախմբւած են այսօր հարիւրաւոր հազարներ՝ ինտելիգենտ և մասսա, — և բովանդակ ռուս կայսրութիւնը ներկայացնում է մի հրաբուխ, որը պատրաստ է յարմար

բոպէին դուրս ժայթքել աւերիչ ու ազատարար լաւան...

Եւ նոյն չարատանջ խնդիրները՝ ազգային անկախութեան ու ինքնավարութեան մասին՝ այժմ արդէն արծարծւում են ռուսահպատակ բոլոր երկրներում և բոլոր յեղափոխական շրջաններում։ Ռուսաստանի ազգային գերիշխանութեան դէմ այսօր գանգատւում է ոչ միայն լեհը, այլև ֆինը, հրէան, լետվինը, հայը, վրացին։ Քաղաքակիրթ ազգերի օրինակից հրահանգւած՝ նրանք ամեն տեղ կազմակերպւում են ազգային հողի վրայ և ներդաշնակ զարնում են ահակոչնակը՝ ոչ միայն այսօրուան, այլև վաղուան վտանգի դէմ...

Խնդիրը ծեծւում է նաև ռուս սոցիալիստական շրջաններում,—ասել է միանգամայն ժամանակի պահանջ է։ Ինչպէս են վերաբերւում ռուս սոցիալիստ կազմակերպութիւնները այդ ծանրակշիռ, կենսական խնդրին։

Սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւն չէ ցոյց տւել դժբախտաբար, առանձին հետաքրքրութիւն էլ ազգայնական հարցերի նկատմամբ։ Իր օրգաններում նա առհասարակ խուսափում է այդ կարգի հարցերից, և եթէ երբեմնապէս շօշափում էլ է՝ այդ նա անում է շատ զգուշութեամբ ու անորոշութեամբ։

Սոցիալ-դեմոկրատիան յայտարարում է, թէ „իւրաքանչիւր մի ազգ իրաւունք ունի իր ուզածին պէս սահմանել իր վիճակը“, բայց մենք հանդիպում ենք նոյն կուսակցութեան կենտրոնական օրգանում և այնպիսի ֆրազներ, որոնք խօսում են ի վնաս այդ յայտարարութեան անկեղծութեան։ „Պրոլետարիատի գործը չէ, ասում է „Իսկրա“-ն, քարոզել ֆեդերալիզմ ու ազգային ինքնավարութիւն. պրոլետարիատի գործը չէ առաջադրել այդ տեսակ պահանջներ, որոնք անխուսափելի կերպով առաջ կը բերեն պահանջ՝ ստեղծելու ինքնավար դասակարգային պետութիւն“։

Մի այլ տեղ ասուած է. „Մենք միշտ և անպայման պիտի ձգտենք բոլոր ազգերի պրոլետարիատի ամենասերտ միութեան, բայց միայն առանձին, բացառիկ դէպքերում մենք կարող ենք առաջադրել և եռանդով պաշտպանել այնպիսի պահանջներ, որոնք հակուած են ստեղծելու նոր դասակարգային պետութիւն կամ թէ փոխարինելու պետութեան լիակատար քաղաքական միութիւնը՝ աւելի թոյլ, դաշնակցական միութեամբ և այլն“: („Խկրա“, 1903 թ. յուլիս 15):

Այս տեսակ տարտամ, երկդիմի, խորհրդաւոր յայտարարութիւններով, բնականաբար, չէին կարող գոհանալ Ռուսաստանի բազմաթիւ ազգերի ներկայացուցիչները, — և Սոցիալ-Դէմոկրատիայի դէմ լուեցին բողոքներ: Լեհական սոցիալիստ կուսակցութիւնը մեղադրեց նրան զօքտրինիօրութեան մէջ: Դժգոհ մնացին և ուրիշ տարրերը:

Սոցիալ-Դէմոկրատ կուսակցութիւնը Ռուսաստանի մէջ հակառակորդ է յայտնուում դաշնակցական, ապակենտրօնական սկզբունքին՝ ոչ միայն պետական սահմանադրութեան մէջ, այլև յեղափոխական կազմակերպութիւնների փոխադարձ յարաբերութեան խնդիրներում: Նա ուզում է լինել աւստրիական Սոցիալ-Դէմոկրատիայի հակապատկերը: Նա ծրագրել է միացնել իր գրկում այլ և այլ ազգերի սոցիալիստական կուսակցութիւնները և մէկ կենտրօնական մարմնի միջոցով վարել շարժումները ոչ միայն ընդարձակ Ռուսաստանի մէջ, այլև հեռաւոր „Օտայրերում“, ուր սոցիալական և նոյնիսկ քաղաքական պայմանները այնքան տարբեր են, այնքան ինքնատիպ:

Այդ ծրագիրը նա չէր կարող իրագործել և պարմանալի կը լինէր, եթէ աջողէր: Լեհաստանի մեծ սոցիալիստական մարմինը դուրս մնաց նրանից: Նրա շարքերից

հեռացած է այսօր նոյնիսկ հրէական Բունդը[1]), այդ հզօր ու գործօն կազմակերպութիւնը, որ երէկ, կարելի է ասել, հոգին էր ռուսական Սոցիալ-Դէմոկրատիայի.— այսօր Բունդը ևս կանգնած է ազգային հողի վրայ, ուզում է հեռու մնալ ամէն տեսակ „խնամակալութիւնից“ և պահպանել իր ինքնուրոյնութիւնը: Նա կատաղի պայքար է մղում ռուս սոցիալ-դէմոկրատների դէմ, մտրակում է նրանց կենտրօնացման ու գերիշխանութեան ձգտումները, անուանում է նրանց „ասսիմիլատօրներ“, ռուսաբարներ[2]).

Բայց Սոցիալ-Դէմոկրատիայից զատ՝ բուն Ռուսաստանում կայ մի ուրիշ սոցիալիստական կուսակցութիւն, որը իր ըմբռնումով: Դա Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւնն է, որը շարունակում է հին, փառապանծ „Նարոդնայա Վոլիա“-ին,—մի կուսակցութիւն, որ արտադրել է իր միջից Բալմաշովներին ու Կարպովիչներին և որը իր տաքտիկով վաստակել է արդէն մարտական անունը և այսօր դժոխային երկիւղ է ներշնչում միապետական կառավարութեանը: „Նարոդնայա Վոլիա“-ի առաջադրած պահանջը ազգային ինքնավարութեան մասին՝ նա ընդհանրացնում է և տարածում ամբողջ կայսրութեան վրայ.

„Մենք դրում ենք մեր դրօշակի վրայ ազգութիւնների լիակատար և անպայման իրաւունքը՝ իրենց վիճակը տնօրինելու: Մենք պաշտպանում ենք դաշնակցական կազմը, տեղական ամենալայն ինքնավարութիւնը, ժողովուրդների կուլտուրական ինքնուրոյնութիւնը“...

Ահա թէ ինչ ենք կարդում այդ կուսակցութեան պաշտօնական օրգանի՝ „Բէվոլիւցիօննայա Ռոսսիա“-ի

---

1) Այդպէս կոչւում է Լեհաստանի, Լիտվայի եւ Ռուսաստանի հրէա սոցիալիստների դաշնակցութիւնը:
2) Տես „Վեստնիկ Բունդա“ 1904 յունուար-փետրուար:

մէջ (1903 թ. N. 18)։ Ապա ողջունելով լեհ, ֆին, հայ, վրացի և ուրիշ ազգերի վերածնութիւնը, նոյն օրգանը բացականչում է.

„Կեցցէ այդ կենսունակ ազգութիւնների դաշնակցութիւնը՝ աճող յեղափոխական Ռուսաստանի հետ“,—մի դաշնակցութիւն, որ „ամրապնդած է տանջանքների ու կռւի ընդհանրութեամբ“։ *)

Համարձակ ու շիտակ յայտարարութիւններ, որոնք հիմնապէս տարբերւում են Սոցիալ-Դէմոկրատիայի երկչոտ ու տարտամ ֆրազաբանութիւնից։

Զարմանալի չէ, որ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան հմայքը աճում է նաև բուն Ռուսաստանից դուրս, կայսրութեան ծայրերում։ Թէ իր տէոօրական-ռազմական տաքտիկով, որը ամենից աւելի է համապատասխանում մտքերի այժմեան տրամադրութիւններին և թէ ազգայնական բասիոնալ ծրագրով՝ „նարոդնայա Վոլիա„-ի արժանաւոր յաջորդը պիտի ընդարձակէ իր գործունէութեան ու ազդեցութեան շրջանը, պիտի ղարկ տայ համերաշխութեան գործին՝ բուն Ռուսաստանի և կենտրոնական „Ծայրերի“ միջև, պիտի փութացնէ այն բաղձալի օրը, երբ ռուս, ֆին, լեհ, լիտվին, մալորոս, վրացի, հայ՝ բոլորն էլ տոգորուած միջազգայնութեան և ազգային անկախութեան գաղափարներով, իբրև մի ներդաշնակ, անպարտելի բանակ, միաձայն կ'որոտան բռնապետական դահճի երեսին. „Կեցցէ Ռուսաստանի բոլոր ազգերի յեղափոխական ուժերի մարտական դաշնակցութիւնը“...

---

*) Այդ թերթում հրատարակւած են մի շարք կարեւոր յօդուածներ ազգային ինքնավարութեան խնդրի մասին — հազւադէպ երեւոյթ ռուսական մամուլի պատմութեան մէջ։

VIII

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՌԻՒԸ

Հայի պատմական ճակատագիրը. — Բացառիկ միջավայր. — Յեղի ուժը. — Հայութիւնը XIX դարու սկզբներում. — Վերածնութեան շարժումը օսմանեան եւ ռուսական Հայաստանում. — Թիւրք քաղաքականութիւնը եւ հայկական շարժման սկզբնաւորումը. — Հայութիւնը խեղդելու ապարդիւն ջանքեր. — Կռիւ Ռուսահայաստանում. — Հայ Յեղ. Դաշնակցութեան դերը. — Համերաշխութիւն Ուրիշ ազգերի յեղափոխականների հետ. — Սոցիալիստական Պրոպագանդ. — Ազգային պաշտպանութիւնը՝ առաջնակարգ հարց։

Անիծւած ճակատագիր...

Սահմանադրական երկրների մէջ ճնշւած ժողովուրդների բաղդն էլ ինչ ողբում, բայց որքա՜ն դարձեալ երջանիկ են նրանք յ ա ր ա բ ե ր ա բ ա ր։

Արեան ու սարսափների հայրենիքը կայ երկրագնդի մի խուլ անկիւնում, որ կ'ուզէր վայելել գէթ ինչին մասը այդ ժողովուրդների անկատար ազատութեան։ Հայը նախանձում է ոչ միայն Պօղնանի ու Սիլեզիայի բնակչին, այլ նոյնիսկ Գալիցիայի թշւառ, թափառական հրէային, ռուսինին։ Հայը շատ անգամ երանի է տալիս նոյնիսկ բնութեան հովանու տակ ապրող վայրի գաղաններին...

Եւ երբ մենք հոգեկան անդորրութեան մէջ՝ դիմում ենք փիլիսոփայական մարզանքների, երբ կառուցանում ենք հրապուրիչ ծրագիրներ վաղւան սահմանադրութեան կամ թէ հեռաւոր „սոցիալական հանրապետութեան“ մասին, — հայկական իրականութիւնը իր բոլոր

արհաւիրքներով ծառանում է մեր առջև, որպէս մի վեթխարի հարցական նշան...

Անիծուած ճակատագիր... Կայ արդեօք մի ուրիշ հայրենիք, որը իր ծագման օրերից ի վեր՝ դրուած լինէր այնքան դժբախտ աշխարհագրական և ցեղագրական պայմանների մէջ։ Կայ արդեօք մի ուրիշ կէտ մեր հողագնդի վրայ, ուր պատմութիւնն ու նախապատմութիւնը, քաղաքակրթութիւնն ու վայրենութիւնը այնքան այլանդակօրէն հիւսուէին իրար հետ՝ արտադրելու համար մարդկային դարաւոր նահատակութեան աղեխարշ էջեր...

Քարտէզը սև է՝ սկզբից մինչև վերջ։ „Անցեալը տխուր, ներկան թշուառ, ապագան“...

Ո՛չ, չ՛ասենք „անյոյս“։ Ցառապանքներից ու արիւնից ծեփուած այդ սև քարտէզի վրայ կան լուսաւոր կէտեր՝ յուսադրող ու կազդուրիչ։ Կայ նախ և առաջ այն կենտրօնական իրողութիւնը, որը տիրապետում է հայկական պատմութեան բովանդակ ընթացքի վրայ և որը մի հզօր երաշխաւորութիւն է, մի փայլուն գրաւական լաւագոյն ապագայի. — դա այն անսովոր կենսունակութիւնն է, որով հայ ցեղը զարմանք է պատճառում լուսաւոր աշխարհի ժառանգներին և որի շնորհիւ քանի՜ քանի անգամ նա դուրս է կոչուել կորստեան անդնդից...

Քանի՜ հայրենիքներ, որոնք երբեմն փարթամ որբաններ էին քաղաքակրթութեան, կուլ են գնացել ժամանակի կործանիչ ալիքներում, չկարողանալով պատշաճ պատասխան տալ Դարվինականութեան անողոք օրէնքին՝ „յարմարում“-ի տիեզերական պահանջին. — հայի հայրենիքը ապրեց, յարատևեց։ Իր ճկուն ու գործօն հանճարի շնորհիւ՝ հայկեան փոքրաթիւ ցեղը կարողացաւ գլուխ դուրս բերել պատմական ահեղ փորձութիւններից, մղեց յաղթանակով գոյութեան ու քաղաքակրթութեան պայքարը երկար ու ձիգ դարերի ընթացքում,

անընդհատ նաճողական արշաւանքների, խուժդուժ ցեղերի ու պետութիւնների դէմ և հասաւ ներկայ օրերին, ուր պիտի վճռուէ նրա լինել-չլինելու հարցը...

Վիկոյի „ճակատագրական շրջագծի“ թէորիան չէ արդարանում։ Ազգերը նման չեն անհատներին. — նրանք ապրում են, բայց չեն ծերանում։ Երբ նրանք չեն ձուլուում ուրիշ, աւելի հզօր ազգերի մէջ, երբ նրանք կարողանում են պահպանել իրենց անհատականութիւնը արտաքին հողմերի, քաղաքական փոթորիկների դէմ՝ — նրանք աճում, զարգանում են անվերջօրէն, առանց ծերանալու և առանց մահանալու։ Անկման շրջաններ լինում են, ի հարկէ, նրանց դարաւոր գոյութեան ընթացքում, բայց այդ անկումը առերևոյթս է. նա պարուսկում է իր մէջ — հեգելեան կենտրոստով — վերածնութեան սաղմեր։

Ցասնեվեց դար է գլորել այն ոսկէ օրերից, երբ մենք հին աշխարհին տուինք ապացոյցներ մտաւոր կուլտուրական առաջադիմութեան՝ մեր գիր ու գրականութեամբ, մեր ազգայնական-ազատագրական պայքարով։ Եւ այսօր, այդ հսկայական տարածութիւնը կտրելուց յետոյ, հայը կորովի ու թարմութեան կողմից բնաւ չէ զառամել — ընդհակառակը. այսօր նա նոր կեանք առած՝ գրոհ է տալիս իր մահացու թշնամիների դէմ և պատրաստւում է մի նոր դարապլուխ բաց անել այնտեղ, ուր դարերով իշխել են միայն խաւարն ու արհաւիրքը...

Ի՞նչ էր մնում տասնիններորդ դարի սկզբներում վաղեմի Հայաստանից... Ըստ երևոյթին, խղճուկ բեկորներ միայն։ Ցիր-ցան վաճառականների մի ողորմելի հօրդա — այսպէս էր ներկայանում հայութիւնը լուսաւոր աշխարհին. — վաճառականներ՝ որոնք տարւած էին իրենց եսական, կաստային շահերով, առանց որևէ ազգային-հասարակական մտահոգութեան։

Բայց ահա Արևմուտքից փչեց ցեղափոխութեան փը-

կարար քամին։ Ազատ Հայրենիքի իդեալը սկսեց իր չուն դեպի Արևելք, անցաւ Յունաստանից, մտաւ Փոքր-Ասիոյ խուլ ու խաւար անկիւնները։ Եւ Հայը արթնացաւ։ Արիւնը եռաց նրա երակներում, — երկու հազար տարեկան, բայց տակաւին թարմ, կենսարար արիւնը։ Այն ժամանակ, երբ օսմանեան կայսրութեան բազմաթիւ ցեղերը խորասուզուած էին արևելեան ճահճացած մթնոլորտում, ծոյլ ու անտարբեր դեպի քաղաքակրթութեան համասփիւռ ճառագայթները — Հայը սկսեց թօթափել իր վրայից հինգ դարու գերութեան մղձաւանջը և ցոյց տուեց առաջադիմութեան փայլուն նշաններ։ Հրապարակ եկաւ մի փառաւոր սերունդ, մնաց մեծ մասամբ ֆրանսիական դաղափարներով, որ և կրող հանդիսացաւ ազգային նորաբողբոջ քաղաքակրթութեան։ Ազգային կրթական հիմնարկութիւններ մայրաքաղաքում ու գաւառներում, ժողովրդային լայն դաստիարակութեան ծրագիրներ, բարեգործական հիմնարկութիւններ, պարբերական մամուլ Մխիթարեան ընդարձակ պրոպագանդ և այն։ Տպագրական խօսքը առաջին անգամ հնչեց Փոքր-Ասիայի մտաւոր անապատում, հայոց բարձրավանդակի վրայ („Արծիւ Վասպուրականի“, 1857 թ.)։

Հայկական իմացականութիւնը արտայայտուեց գործունէութեան բոլոր ճիւղերում. անսովոր ուժով փայլեց առևտրի ու արդիւնաբերութեան մէջ, Հայը հանդիսացաւ ճշմարիտ կուլտուր-տրեգեր, մի ջնորդ Եւրոպայի և Ասիայի միջև։ Նա դրեց իր կնիքը նոյնիսկ արուեստի և ընդհանուր պետական քաղաքականութեան վրայ։ Իսկ 1860-ի, այժմ հանգուցեալ „Սահմանադրութեամբ“ նա տուեց իրեն շրջապատող յետամնաց ցեղերին Self Government-ի, ինքնավարութեան գեղեցիկ օրինակ. նա ուզեց ցոյց տալ թէ ինքն այնքան հասունացել է արդէն, որ կարող է վարել իր ներքին գործե-

ը, — և դրանով շեշտեց իր քաղաքակրթական միսիան Արևելքում։

Առաջադիմութիւնը այնքան զգալի էր, որ Հաքստհաուզէն, հռչակաւոր գիտնական-ճանապարհորդը, պնդում էր, թէ Հայը միակ քրիստոնեայ ժողովուրդն է Տաճկաստանի մէջ, որ ընդունակ է կազմակերպելու, իբրև ճշմարիտ հասարակութիւն։

Վերածնութեան փրկարար հոսանքով տարուում էր նաև Հայրենիքի միւս խոշոր հատուածը — Կովկասեան Հայաստանը։ Հէնց որ ստեղծուեցին փոքր ի շատէ տանելի պայմաններ՝ այնտեղ ևս ծաւալուեց Հայ տարրի բեղմնաւոր գործունէութիւնը և անսովոր կենդանութիւն հաղորդեց ոչ միայն իր երկրի, այլ և ամբողջ Կովկասի կուլտուրական կեանքին։ Այնտեղ ևս դպրոցներ, ազգային մամուլ ու գրականութիւն։ Այնտեղ ևս Հայը վաստակեց առաջնութիւն տնտեսական-արդիւնաբերական կեանքում։ Եւ Արարատեան Հայութիւնը՝ օսմանեան Հայութեան հետ ձեռք ձեռքի տուած, ընդհանուր ուժերով ու գովելի նախանձախնդրութեամբ առաջ մղեցին ընդհանուր Հայրենիքի վերածնութեան գործը...

Քաղաքացիական առաքինութիւնների հետ եկաւ միանալու զինուորական-ռազմական արիութիւնը։

Թէ Կովկասեան դժուարին պատերազմներում և թէ Կիլիկիայի ազատ լեռների մէջ՝ Հայը ապացուցեց, որ Կիլիկիան ընդունակ է նաև դիւցազնական սխրագործութիւնների...

Զէյթունը՝ Հայկական Մոնտենեգրոն՝ իր յաղթական կռիւներով Եւրոպայի հիացմունքը շարժեց դեռ 60-ական թուերի սկզբներում։ Հայրենիքի այդ սքանչելի բեկորը, որ անմատչելի բարձունքների վրայ պահպանել էր դարերի ընթացքում անկախ գոյութիւն, իր հերոսական ընթացքով ցոյց տուեց ամբողջ Հայութեան, որ բաւական չէ լոկ կուլտուրական վերածնութեան շարժումը, այլ որ

անհրաժեշտ է հրապարակ գալ լիակատար սպառազի-
նութեան մէջ՝ ազատ ու անկախ հայրենիքը նուաճելու
համար...

Աւա՜ղ, հայութիւնը իր ճնշող մեծամասնութեամբ
դեռ ևս ականջ չունէր լսելու ռազմի որոտումները...
Զէյթունը — մի օազիս ստրկութեան լայնատարած անա-
պատի մէջ, ուր միլիոնաւոր ազգաբնակութիւնը սրտա-
շարժ խոնարհութեամբ քարշ էր տալիս փաշայական
կամայականութիւնների լուծը։

Վեց դար գերութիւն... Ո՞ւր էր այն մոգական գա-
ւաղանը, որ մի հարուածով յեղաշրջէր այդ դարաւոր,
զարհուրելի իրականութիւնը։

Եւ, այնուամենայնիւ, նա յեղաշրջուեց... Զէյթունի
ձիւը, ոչ, բայց ունեցաւ իր արձագանքները։

Մեծ Հայաստանում դպրոցն ու ուսումը յարատևում
էին, բայց անտեսութիւնը սրարշաւ ընթանում էր դէպի
քայքայում... Հայը աւերւում էր, որովհետև թիւրքը
վերածնւել էր ուզում. թիւրքը ուզում էր վերածնւելը
որպէսզի կարողանայ պահպանել իր դիրքը ժամանակա-
կից պետութիւնների համաստեղութեան մէջ, պատե-
րազմների մշտնջենական վտանգի հանդէպ... Պէտք էր
արմատապէս վերանորոգուել, ամրացնել ծովի ու ցամաքի
ուժերը։ Պէտք էր, հետևապէս, բարձրացնել երկրի ֆի-
նանսները։ Բայց այդ նպատակն իրագործելու համար՝
փոխանակ դիմելու բնական ճանապարհին, փոխանակ
զարկ տալու երկրի առևտրին ու արդիւնաբերութեան՝
թիւրքը զարկ տւեց նրանց քայքայման։ Նա մղեց թա-
լանի քաղաքականութիւնը՝ ասիական բոլոր
բռնապետութիւնների գերագոյն սկզբունքը։

Թալանը ծանրացաւ առանձին ուժգնութեամբ՝ „բայա“ի
վրայ։ Նա դեռ կը համբերէր, նա շատ էր համբերել...
Հայի հայրենիքը դարձաւ թատերաբեմ մի կազմակերպուած
աւազակութեան... Այդ օրերից և հնչեց հայաստանցու

աղեկտուր ողբը։ Հայ ինտելիգենցիան արձագանք տւեց։
Հայոց ռէֆորմների շարատանջ խնդիրը հրապարակ եկաւ
և Բերլինի կոնգրէսում մեծ պետութիւններից սանկ-
ցիա ստացաւ։

Խե՜նդ ու բերկրա՜նք ամբողջ հայ աշխարհում։

Սակայն և շուտով — յուսախաբութիւն... 61րդ յոգ-
ւածը վիժեց։ Նա մնաց մի ֆիկցիա, որ միայն շա-
բունակ գրգռեց դահճի անգթութիւնը դէպի իր զոհը։
Եւ „բայա“ն սպասեց... մարտիրոսութեան խարոյկի
վրայ կապած, իր արտասուալի աչքերը միշտ յառած
դէպի „ազատարար քրիստոնեայ աշխարհը“... Ոչ ոք
չեկաւ։ Նրա տունն ու տեղը աւարի տրւեցին, նրա
տաճարները անպատիժ կերպով սրբապղծուեցին, նրա
ընտանեկան բոլոր սրբութիւնները ոտնատակ եղան.
Նրա կնոջ ու աղջկայ պատիւը մատնուեց քրդի սանձար-
ձակ վաւաշոտութեան. նա հաւա՜ր կանչեց, գթութիւն
աղերսեց, — աշխարհը լուռ էր, քար ու ապառաժ...

Եւ ահա այն ժամանակ լքած ու վրէժխնդիր ստրկի մէջ
խօսեց այն սրբազան բնազդը, որ ազատութեան անմահ
երգիչը (Շիլլեր) պատկերացրել է իր հուժկու տողերի մէջ.

Երբ հարստահարուածն ապստեղ՝ աշխարհում
Դատ ու իրաւունք բնաւ չէ գտնում,
Երբ որ բռնութեան լուծը գարշելի
Դառնում է ստրկին անհանդուրժելի,
Նա իր ձեռքերը երկինք է մեկնում
Եւ վստահօրէն այնտեղից խլում
Իր իրաւունքներն յաւիտենական,
Որոնք երկնքի աստղերի նման
Անշարժ, անվախճան անհունին փարած՝
Մնում են այնտեղ յաւիտեան կախուած։
Բռնութեան նախնի վիճակն է հասնում,
Երբ մարդը մարդին ոսոխ էր դառնում.
Երբ էլ ճար չունինք, սրին ենք դիմում,
Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում,
Ընդդէմ մեզ ճնշող անարգ բռնութեան
Պաշտպանում ենք մեր կին ու երեխան։

Ալէկոծուեց հայ երիտասարդութիւնը։ Արարատեան աշխարհից մինչև Վան ու Էրզրում տարածուեց մտքերի այն փրկարար խմորումը, որ նախանշանն է յեղափոխական շարժման։ Կովկասը ցնցուեց „Էրզրումի լեռներէն հնչող“ առաջին որոտումներից. գիւղ ու քաղաքներում արագ շրջան արաւ ռուսահայ գրողների ու բանաստեղծների վաղուց փայփայած հայրենասիրական կոչը՝ „Դէպի Հայաստան“։ Անմոռանալի օրեր — վարդագոյն յոյսերի, անհուն, մասսային խանդավառութեան օրեր... Ո՞վ է այն համարձակը, որ վստահանայ պնդել թէ շահախնդիր, նիւթապաշտական դրդումներ կային կովկասահայերի այդ խանդավառութեան մէջ... Շա՞հն էր ղեկավարում(*)... արարատեան խեղճ շինականին, որը իր համեստ լուման էր ձգում յեղափոխական գանձարանի մէջ, շա՞հն էր ղեկավարում — ո՞, մատերիալիզմի պրոֆանատօրներ — և՛ այն կենսալից երիտասարդներին, որոնք շարան-շարան անցնում էին սահմանը՝ իրենց մատաղ գլուխը զոհաբերելու տանջող հայրենիքի սեղանի առաջ...

Երիտասարդ Հայաստանն էր դա։ Այդտեղ հարթուում, հալուում էին սահմանները, այդտեղ թիւրքահայ, ռուսահայ ու պարսկահայ գրկախառնուում էին՝ յանուն այն մեծ, անյաղթելի տենչի, որը յատուկ է մարդկային բոլոր արիւնակից համայնքներին, յանուն այն տենչի, որը մղում է յոյնին, բուլգարին՝ կռուի դաշտ վազել, իրենց արիւնը թափել՝ Կրետէի ու Մակեդոնիայի ազատութեան համար...

Երիտասարդ Հայաստանն էր դա։ Գաղափարական վսեմ թռիչքների, ազատ մտքի և ասպետական ղգացմունքի Հայաստանը։ Նա եկել էր ի կատար ածելու պատմական մի մեծ առաքելութիւն։ Նա գրել էր իր դրոշակի վրայ Ցաճկահայաստանի անկախութիւնը, լաւ գիտակցելով, որ այդ վերջինը անհրաժեշտ պայմանն է հայութեան կեանքի ու բարգաւաճման։

Եւ նա սկսեց անհաւասար կռիւը՝ մի զարհուրելի, դժոխային միջավայրում, շրջապատուած ամեն կողմից մարդակերներով։

Զընայած անօրինակ խոչընդոտներին՝ հայ յեղափոխական շարժումը ունեցաւ փառահեղ արտայայտութիւններ...

Զէյթուն ու Սասուն, Խանասոր ու Խաստուր, Բանկ-Օտման, Սամաթիա, Դալիբաբա... անմոռանալի դրրուագներ մի սրտաշարժ դիւցազներգութեան...

Հրաշալի կորովներ, անձնուրացութեան վեհ, պայծառ տիպարներ, որոնք վաղաժամ ընկան անագորոյն հարուածների տակ՝ իրենց վերջին ողջոյնը յղելով Ազատութեան կուռքին... *Ave libertas, morituri te salutant!*

Անյայտ, մոռացուած շիրիմներ՝ ցան ու ցրիւ հայրենիքի ամբողջ տարածութեան վրայ... Պատիւ, ձեզ, ազնիւ, պաշտելի նահատակներ, ձեր անհանգիստ ու ահեղ հոգիները յաւիտենական սպառնալիքի պէս պիտի սաւառնեն Բռնաւորի գլխին, մինչև որ իրագործուեն ձեր փայփայած երազները։ Պատիւ ձեր բազմատանջ աճիւններին, որոնք պիտի դառնան սեփականութիւն ապագայ հայկական պանթէօնի...

Այո. եղան վայրկեաններ — գոռ, շառաչալից — երբ նոյնիսկ „պառաւ“, նորատեաց, ինքզինքը հակայեղափոխական անուանող Հայաստանը՝ ի տես իր երիտասարդ զաւակների հերոսութեան և եւրոպական փութկոտ միջամտութեան՝ փառաբանում էր և սիրով գրկում կռուի գաղափարը։ Թշնամին սոսկում էր ու „բրայա“-ի անվեհեր թռիչքներից, մարտական մի սարսուռ էր անցնում հայութեան ջղերով և նա հպարտ էր...

Անցան փոթորկոտ վայրկեանները։ Եւրոպան սպառնաց ու լռեցուցեց։ Անգլօ-ռուսական հակամարտութիւնը հա-

սաւ իր գագաթնակէտին։ Լօբանով յայտարարեց բա-
ցարձակ ձեռնպահութիւն և խրախուսեց հայերի դահ-
ճին։ Ֆրանսիան համակերպեց Լօբանովին։ Միւս պե-
տութիւնները ևս ձեռնպահ մնացին։ Անգլիան չխիզա-
խեց միայնակ միջամտել։ Մայիսեան ծրագիրն էլ քնեց.
բոլոր խոստումները մնացին խոստում։ Դրա փոխարէն
պայթեց անօրինակ կատաստրոֆը և հայրենիքը դարձաւ
արեան ծով։ Բորենիների քաղցած վոհմակները գահա-
վիժեցին կէս-դիակնացած Հայաստանի վրայ... երկար,
անպատիժ յօշոտեցին...

Եւ հնչեց դժոխային, յաղթական քրքիջը Եըլդըզի
պալատում. „Հայը ջախջախուած է և հայկական խըն-
դիրը մեռած“...

Պատրա՞նք... Կարծեցեալ դիակը շուտով երերաց ու
նորից արձանացաւ իր ոսոխի դէմ, որպէս վրէժի, ատե-
լութեան մարմնացում։

Հարուածը մեծ էր, անտարակոյս։ Երկարատև ճգնա-
ժամի ընթացքում յեղափոխական կորովը թուլացաւ,
կուռողների մի մասը դասալիք եղաւ։ Սակայն դրանով
հայկական դիմադրութիւնը չ՝անդամալուծուեց։ Հայ
Յեղափոխական Դաշնակցութիւնը կան-
գուն մնաց՝ սարսափների, դասալքութեան և ընդհանուր
յուսահատութեան այդ սև շրջանում։ Նրա մէջ ար-
տայայտուեց ցեղի յամառ կենսունակութիւնը։ Կուռով
կոփուած, կուի մէջ դաստիարակուած և միևնոյն ժամա-
նակ զինուած իր դատի վերջնական յաղթանակի հը-
պարտ գիտակցութեամբ՝ նա անխոնջ արծարծեց յե-
ղափոխական կրակը, պայքարեց հակայեղափոխական
համաձարակի դէմ, պաշտպանեց, սիրտ տուեց ժողո-
վրդին։

Եւ ահա այդ նոյն վերաւոր ժողովուրդը ուժգին
ցնցումներով նորից խռովում է թշնամու հանգիստը...

Ահա վերստին լսում են ռազմի աղաղակները հայ-

կական բարձրավանդակից։ Սասունը բռնկուել է և Հայ
Յեղափոխական Դաշնակցութեան բանակը՝ Տալվորիկի
բարձունքների վրայ ազատութեան դրօշակը պարզած՝
կռուում է թշնամու տասնապատիկ ուժի՝ կանոնաւոր
զօրքի և քուրդ աշիրէթների դէմ...

Ահա միաժամանակ ընդհարումներ ու մասսային բան-
տարկութիւններ, ցասում ու արհաւիրք բովանդակ երկրի
մէջ. — մի ցաւոտ, անհնարին կացութիւն, որ նշմարել է
տալիս հորիզոնի վրայ ազատութեան կարմիր արշալոյսը...

* * *

Կռիւը նշանաբան է։

Բռնապետութիւնը — այդպէս է արդէն նրա ճակա-
տագիրը — ինքն է հոգում նրա տարածումը... Կռուի
շռինդը լսում է այսօր հայոց աշխարհի այնպիսի վայ-
րերում, որոնք քիչ առաջ զարմացնում էին իրենց չնաշ-
խարհիկ համբերողութեամբ...— խաղաղ, արքայապաշտ
Անդրկովկասում։

Զուարթ օրեր են, թէպէտև ծանր, թէպէտ տագ-
նապալի։ Էլ մնաս բարեաւ ռուսահայի անդորրութիւն...

Մի խենթ որոշում, մի անարգ ուկազ ծայրէ ծայր
ցնցեց ամբողջ երկիրը։ Հայ ժողովուրդը ոտքի կանգնեց
և կօզակների սուիններ դիմաց շեշտեց իր դարաւոր
իրաւունքները։

Ծնունդ առաւ ռուսահայկական շարժում։
Նա սկսեց ժողովրդական ցոյցերով, զինուած, արիւնահեղ
ընդհարումներով։ Նա այսօր շարունակւում է տէռօրական
գործողութիւններով և անդուլ, եռանդուն ագիտացիայով։
Նա ունի արդէն իր հերոսներն ու նահատակները։ Ռուս
յեղափոխական կուսակցութիւնները և Եւրոպայի անկա-
շառ մամուլը ողջունեցին նրան, իբրև մի նոր ծանրակշիռ
ֆակտոր Ռուսաստանի ազատագրութեան գործում։

Հայ յեղափոխական կազմակերպութեան համար դը-

բութիւնը բարդացաւ։ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ մինչև օրս մղում էր հայոց ազատութեան կռիւը միմիայն սուլթանի կառավարութեան դէմ,—յայտնուեց մի աւելի ահեղ թշնամու հանդէպ։ Դատը մէկ էր, սակայն՝ թէ սահմանից անդին և թէ ասդին. ճընշուած, իրաւազուրկ հայ ժողովուրդն էր, որ առաջադրում էր իր հրամայական պահանջները,—և Դաշնակցութիւնը, առանց վարանելու, ստանձնեց կովկասեան Հայաստանի դատը։

Կռիւ բոլոր միջոցներով՝ սկսած խաղաղ, կուլտուրական պայքարից։ Ազգայնութիւնը ոչնչացնում են—պէտք է հակազդել։ Խլում են հայ տարրից նրա բոլոր իրաւունքները և ձգտում են իսպառ այլասերել նրան, անբարոյականացնել։ Բոլոր զէնքերով պէտք է մաքառել ռուսացման դէմ։ Բոլոր զէնքերով պէտք է պաշտպանել և կատարելագործել առաջադիմութեան այն հրաշալի գործիքը, որ կոչւում է ազգային-հասարակական ինքնագիտակցութիւն։

Լեհաստանը տալիս է այդ կողմից հիացմունքի արժանի օրինակ։ Այնտեղ, այն դիւցազնական երկրում, չբաւականացան միայն վիթխարի ցոյցերով ու ապստամբութիւններով։ Այնտեղ ազգային պաշտպանութեան գործը կազմակերպեցին նաև խաղաղ շրջանում։ Այնտեղ ազգութեան բոլոր դասակարգերը, գաղափարական բոլոր հոսանքները անխոնջ, սիստեմատիկ կռիւ յայտարարեցին ռուսացման վտանգին։ Իշխողը բռնութեամբ պատաստել ուզեց իր սեփական լեզուն,—հպատակները յամառ տոկունութեամբ առաջ մղեցին մայրենի լեզվի բուռն պրոպագանդը։ Պէս պէս ձևերի տակ երևան եկան բազմաթիւ ընկերութիւններ՝ լեհական լեզուն, մաքուրն ու գրականութիւնը խրախուսելու համար։ Հայրենիքը դարձաւ մի ընդարձակ մրցարան։ Գիւղ ու քաղաքներում,

ընտանիքներում ու հասարակական շրջանների մէջ՝ մէկ էր նշանաբանը—ռուսացման դէմ...

Գովելի եռանդ, ազգային հզօր նախանձախնդրութիւն։ Եւ քաղաքակիրթ աշխարհը ծափահարեց լեհերին։ Թշնամին անգամ պատկառանք զգաց այդ հսկայական զօրութեան առաջ և բռնեց զիջումների թեք ճանապարհը։

Կռիւ մի ձևն է դա՝ զօրաւոր, թէև անարիւն՝ որ անհրաժեշտ է պատաստել նաև կովկասեան Հայաստանում։ Նա լրացուցիչ է զինուած պայքարի...

Հայ ցեղափոխական Դաշնակցութիւնը կռիւ է քարոզում և համերաշխութիւն։ Բռնապետութեան դէմ մղելիք կռիւի մէջ նա ձեռք է մեկնում բոլոր բախտակից, դժգոհ տարրերին։ Նա արդէն փոխանակում է համերաշխութեան արտայայտութիւններով՝ վրացի սոցիալիստ-ինքնավարականների և ռուս սոցիալիստ-յեղափոխականների հետ։

Ցեղափոխութեան աւետարանը պիտի աջողէ համատարած կարճ ժամանակում միացնել տարբեր, նոյնիսկ իրարու հակառակ ազգերը...

Միացնել, սակայն ոչ ձուլել։ Ազգային ինքնավարութիւնը պէտք է լինի անկիւնաքարը բոլոր տարրերի քաղաքական դաւանանքի։ Եւ փոքրիկ ազգերի ներկայացուցիչները պէտք է միշտ շեշտեն այդ պօստուլատը՝ ռուս յեղափոխական կուսակցութիւնների առաջ։

„Ազգային ինքնավարութիւն“ կամ „անկախութիւն“ բառը չը պէտք է տեղիք տայ թիւրիմացութիւնների։ Հ. Յ. Դաշնակցութիւնը—հարկ կայ արդեօք ասել—անջատ հայկական թագաւորութեան կուսակից չէ։ Նա իր ծրագրով ու գործունէութեամբ, իր բովանդակ կերպարանքով միշտ եղել է և է ժողովրդական

կուսակցութիւն, պաշտպան աշխատաւոր ընդ-
հանրութեան շահերի, ատող ամեն տեսակ առանձնա-
շնորհումների՝ լինի ազգային, թէ դասակարգային։

Եւ եթէ լեհ, ռուս, վրացի՝ կարող են երևակայել
իրենց անկախութիւնն ու ինքնավարութիւնը՝ դաշնակ-
ցական մի հանրապետութեան մէջ—դրանից աւելի հե-
ռուն չեն գնում „Դաշնակցութեան“ բաղձանքները։

Եւ երբ Մարքսիզմի թէօրետիկոս Կարլ Կաուցկի փա-
փագ է յայտնում իրագործած տեսնել հայոց ազգային
անկախութիւնը—նա ևս, անտարակոյս, ուրիշ կերպ չէ
մտածում...

Ազգային շարժումը չըպէտք է հակասէ սոցիալիս-
տական շարժման։ Օրինակ առնենք Պոլնանի և աս-
տրիական երկրների սոցիալիստներից։ Այդ միանգա-
մայն անհրաժեշտ պահանջին գիտակից է Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը, որ 12 տարի սրանից առաջ մտցրել է
իր ծրագրում՝ ազգային անկախութեան պահանջի հետ
միասին՝ սոցիալիզմի գաղափարը, որ և արծարծել է
նա տարիների ընթացքում՝ իր հրատարակութիւնների
մէջ։

Նոյնիսկ սոցիալիզմի աջող պրոպագանդի համար, նոյն-
իսկ դասակարգային կռիւը նպաստաւորելու համար՝
Հ. Յ. Դաշնակցութիւնը պաշտպան է հանդիսանում
ազգային ինքնուրոյնութեան։ Սկզբունքի նկատումնե-
րից զատ՝ կայ տաքտիկի, նպատակայարմարու-
թեան հարցը, որ թերևս կարևորագոյնն է ներկայ
պայքարի մէջ։

Անգոյն, ֆրազամոլ կոսմոպոլիտիզմը, անտարբերութիւնը
դէպի ազգային-հասարակական ստացուածքները՝ արգելք են
լինում ժողովրդային մեծ զանգուածներին՝ յարելու սո-
ցիալիզմին։ Հասարակութեան յետադէմ տարրերը պատ-
րաստ են միշտ շահագործելու այդ կոսմոպոլիտիզմը և

ներկայացնելու իրանց՝ իբրև ազգայնութեան միակ հո-
վանաւորներ, նրա ճակատագրի միակ կրողներ։

Միւս կողմից՝ որքա՞ն անհրաժեշտ է յայտնում ազ-
գային ինքնուրոյնութիւնը — նոյնիսկ կազմակերպական
խնդիրների մէջ — երբ նկատի էք առնում պայմանների
այլազանութիւնը միևնոյն ռէժիմի տակ ապրող երկրնե-
րում։ Տարբեր լեզուներ, տարբեր պատմական աւան-
դութիւններ, միանգամայն տարբեր հոգեբանութիւն...
Մէկ ամբողջական (einheitlich) տաքտիկ, մէկ կենտրո-
նական՝ ամբողջ ռուս կայսրութիւնը ընդգրկող մարմին՝
չէ կարող իրագործուել և յարատևել, ինչպէս փաստերն
էլ վկայում են արդէն։

Սոցիալիստական կուսակցութիւնները՝ հայ, վրացի,
ռուս և այլն՝ պէտք է անհրաժեշտաբար գործեն ինք-
նագլուխ, իւրաքանչիւրը իր ազգային միջավայրում, հա-
մաձայն այդ միջավայրի յատուկ պահանջներին,—մի և
նոյն ժամանակ բոլորն էլ կապուած սերտ դաշնակցական
կապով։ Այդ կերպ միայն կարելի է սահմանել աշխա-
տանքի խելացի ու արդասաւոր բաժանում. այդպէս
միայն կարելի է ամրացնել յեղափոխական եռանդն ու
կորովը այլ և այլ լծակից երկրների մէջ և ուղղել
նրանց դէպի ընդհանուր նպատակակէտը — բռնապե-
տութեան ու կապիտալիզմի տապալումը։

* * *

Ամփոփենք։

Սոցիալիստական նորաբողբոջ շարժումին Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը—հաւատարիմ իր ծրագրի ոգուն—կը բերէ
իր գործօն աջակցութիւնը, սակայն այդ շարժումը չէ
կարող շեղել և չըպէտք է շեղէ նրան իր կենտրո-
նական մտահոգութիւնից, որ է՝ ազգային
պաշտպանութեան գործը։

Ազգային-քաղաքական դա՞տ,— ահա մեր ցաւոտ այժ-

մեութիւնը։ Ա՛յլ կերպ չէ կարող տրամաբանել մի հայ մարմին, մի կուռող մարմին, որ ուղում է կանգնած լինել իր կոչման բարձրութեան վրայ։

Ի՞նչ է „դասակարգային կռիւների“ դերը այն ահռելի տարտարոսի մէջ, ուր բացակայում է—թէ „բուրժուայի“ և թէ „պրոլետարի“ համար — նոյնիսկ ապրելու, աճելու իրաւունքը։ Ո՞վ է այն աստիճան խզել պարտքի և առողջ դատողութեան հետ, որ գնայ քարոզէ սոցիալիստական թէորիաները՝ ջարդի յարատև կոչմարի տակ ապրող Մշեցուն, Վանեցուն... Կամ ի՞նչ է նոյն այդ „դասակարգային կռիւ“ ծաւալը կովկասեան Հայաստանում՝ համեմատած այն խոր, արիւնահոս վէրքերի հետ, որոնք բացուած են ազգային մարմնի վրայ...

Ա՛յո։ Հայրենիքի արիւնաներկ տեսարանի առաջ, այն խորտակուած օճախների և լացող աւերակների դիմաց՝ այն յարաժամ դաւերի և պարբերական ջարդերի հանդէպ՝ մենք մի վայրկեան անգամ չպէտք է մոռանանք մեր առաջնակարգ, մեր հրամայական, մեր սրբազնագոյն պարտաւորութիւնը, որի առջև նսեմանում են բոլոր ուրիշ մտահոգութիւնները։ Ա՛յն մեծ, անլեզու մասսան, որ դեգերում է բռնակալական սարսափների տակ, մերթ երերալով ու փոթորկելով, մերթ հոգեվարքի դուռը հասնելով, բոլորից հալածուած և բոլորից լքուած,—այսօր նա մեզ վրայ է յառել իր տրտում հայեացքը, մեզնից է սպասում առաջնորդութիւն և աջակցութիւն։

Զրդաւաճանե՛նք նրան, չբմտանենք ի սաստ ճակատագրի և մանաւանդ... չբյուսահատենք նրանից։ Ճրագնաժամի, ծով տառապանքի օրերին նա դուրս բերեց անկարեկիր աշխարհի առաջ իր խորունկ ծալքերում մթերուած՝ հսկայական ուժն ու կորովը։ Նրա անվեհեր կամքը, կարելի է ասել, հաւասարուեց նրա անօրինակ դժբախտութեան...

Եւ այսօր յոյսի մի զօրաւոր ճառագայթ է անցնում յօշոտուած Հայաստանի վրայով։

Ա՛յսօր—ո՞վ չէ տեսնում այդ—հայութիւնը ամենուրեք՝ կովկասում թէ թիւրքահայաստանում, թէ ուրիշ վայրերում՝ վաստակել է մի անգնահատելի ուժ,— իր միութեան կորովի գիտակցութիւնը, իր ազգային ինքնաճանաչութիւնը, որ ոչ մի հողմ չէ կարող խախտել։ Հայրենիքի հոգին հանդէս է գալիս այսօր՝ աւելի մեծացած, աւելի ամբողջացած՝ այն սարսափելի հարուածների տակ, որոնք նպատակ ունէին բնաջինջ անել նրան...

Ներշնչե՛նք այդ յամառ, անյաղթելի ոգով և արծարծենք նրա անհրաժեշտութիւնը հայրենակիցների մէջ՝ որպէս մի սուրբ, անաղարտ պաշտամունքի՝ որի անունով արժէ և պէտք է զոհաբերել։

Լծե՛նք մենք ևս այն ազատարար, տիեզերական աշխատանքի մէջ, որ պիտի խորտակէ բոլոր շղթաները և պիտի իրականացնէ մարդկային ճշմարիտ եղբայրութիւնը. սակայն չմոռանանք՝ — մարդկութիւնը այնքան ընդարձակ է, որ նրա ներշնչած զգացումը կարող է խպառ կորսուել լուծուել իր տարտամանհունութեան մէջ։ Արժէ՞նք սիրել նրան այն փոքրիկ, սահմանափակ մարդկութեան միջոցով, որի հետ կապուած ենք սերունդների աղի արցունքներով, մեր մտքի խորունկ արմատներով, մեր սրտի ամենանուրբ թելերով...

Յառա՛ջ։ Պատմութեան անիւը թաւալւում է արեան ու տարտասուքի միջից՝ պաղ ու անտարբեր դէպի ճնշածների հեծկլտուքները։ Նա բարձրացնում է, պատուաւոր դիրք տալիս միմիայն ըմբոստներին, իրենց ազատութիւնը նաւաճողներին... Խո՛ր արձանագրենք մեր գիտակցութեան մէջ այդ համատարած, անողոք օրէնքը և ստուարացնենք, սեղմենք մեր շարքերը։

Անդուլ մաքառումով հարթենք ճանապարհը հայրենիքի ազատ բարգաւաճման համար՝ սպասելով այն երանելի օրին, երբ գոյութեան դժնդակ պայքարը տեղի կըտայ ամենուրեք խաղաղ կուլտուրական մրցման, երբ ժողովուրդները՝ ազատուած ընդմիշտ տիրանների և կապիտալի բռնակալութիւնից՝ կ'եղբայրանան տիեզերական հոյակապ Դաշնակցութեան մէջ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		Երես
I	ԱԶԳԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ	7
II	ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ	13
III	ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԻԴԵԱԼԸ	20
IV	ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ	27
V	ԴԷՊԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	37
VI	ՓԱՍՏԵՐ	43
VII	ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ	55
VIII	ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՒԸ	75

«Ազգային գրադարան»
NL0194216